Ես ուզում եմ տեսնեմ այն հերոս բիզնեսմենին, որն աչքի առաջ ունի Քաջարանի կոմբինատը, «Վիվասելը», այլ ձեռնարկություններ, Սամվել Կարապետյանի օրինակը... հո ապուշ չի՞. գա, մեծ պրոյեկտ սկսի: Մի օր մի բան կասի, վարչապետի դուրը չի գա, կգան, հաջորդ օրը կձերբակալեն: Այդ իրավիճակում բիզնես միջավայրը խթանող չէ:

Կարդացեք՝ էջ 4



Առանց սեփական ժողովրդի աջակցության՝ ցանկացած արտաքին «սատարում» ընդամենը ժամանակավոր վարկ է, որի դիմաց պետությունը վճարում է սեփական ինքնիշխանությամբ: Երբ պետությունը սկսում է սպասարկել բոլորին՝ բացի իր քաղաքացուց, դադարում է լինել ինքնուրույն գործոն, վերածվում է աշխարհաքաղաքական առեւտրի առարկայի:

Կարդացեք՝ էջ 6

Հայ ժողովուրդ, ինչպե՞ս կարող ես թույլ տալ, որ պետական դավաճանը նորից գնա ընտրությունների, վերարտադրվի եւ ավարտին հասցնի մեր երկրի կործանումը: Հարկավոր է արգելափակել նրա ընտրվելու իրավունքը, ուղարկել բանտախուց եւ կազմակերպել արդարացի ընտրություններ: Միացյալ ընդդիմություն, ոտքի հանիր ժողովրդին:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 72 (4207), 7 մայիս, հինգշաբթի, 2026

www.hraparak.am

ՔՊ մեր աղբյուրները վստահեցնում են, որ Թալինի ՔՊ-ական քաղաքապետ Տավրոս Սափեյանին որոշել են պատժել, քանի որ դա «լավ չի ընկալվի ժողովրդի կողմից»: Մեր տեղեկություններով՝ ՔՊ-ական համայնքապետի դեմ հաղորդմանն ընթացք է տրվել, վարույթ հարուցվել: Բանն այն է, որ այն, ինչում մեղադրում են ընդդիմադիրներին, մի քանի անգամ ավելի վատ եւ ապացուցված փաստով արել է Տավրոս Սափեյանը: Նա նախընտրական փուլում՝ սոցիալական աջակցության անվան տակ, համայնքի բնակիչներին ավելի քան 11 մլն-ի «ընտրակաշառք» է բաժանել, որի մասին դիտորդական կազմակերպության ահազանգից եւ դատախազությանն ուղարկված հաղորդումից հետո համայնքապետը ցինիկ պարզաբանում տարածեց՝ թիրախավորելով լրատվամիջոցներին. «Կյանքի ծանր պայմաններում հայտնված քաղաքացուն ձեռք մեկնելը ընտրակաշառք որակավորելն առնվազն անբարոյականություն է, լավագույն դեպքում՝ ակնհայտ անտեղյակություն: Այ թերթոններ, որտե՞ղ էիք այս 4 տարիների ընթացքում, երբ ես եւ իմ թիմն ամեն օր աշխատել ենք ու շարունակում ենք աշխատել, որպեսզի մեր համայնքի բնակիչը դժվար պահին միայնակ չմնա»: Տավրոս Սափեյանը Նիկոլ Փաշինյանի ՔՊ-ի ընտրացուցակի 61-րդ համարն է, հետեւաբար՝ այս շրջանում իրավունք չունի նաեւ սոցիալական օգնություն բաժանել բնակիչներին: ՔՊ-ում կարծում են, որ նրան պետք է առնվազն հեռացնել նախընտրական ցուցակից:

Ստեր տեղեկություններով, հունիսի 7-ի ընտրությունների նախընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկից առաջ Նիկոլ Փաշինյանն ու կառավարության կարկառուն ՔՊ-ականները, որոնք մասնակցելու են քարոզարշավին, արձակուրդ են գնալու: Չնայած դեռեւս 2018 թվականին Փաշինյանը պնդում էր, որ Ընտրական օրենսգիրքը չի պարտադրում, որ քարոզարշավի ժամանակ թեկնածու համարվող կառավարության անդամներն արձակուրդ վերցնեն, եւ անգամ պնդում էր, որ աշխատանքային ժամերին էլ կարող է քարոզարշավ իրականացնել, սակայն այնքան շատ օրենքներ են խախտել, որ որոշել են գոնե ձեւական արձակուրդ վերցնել եւ 24/7 ռեժիմով լծվել նախընտրական քարոզչությանը: Քարոզարշավի մեկնարկը տրվելու է մայիսի 8-ին: Մենք գրել էինք, որ ՔՊ-ն արշավը սկսելու է Սյունիքից, երկու օր մնալու են մարզում, մայիսի 9-ին՝ Եռատոնին, Կապանում հանրահավաք են նախատեսում: Երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած «Հայաստան» դաշինքն էլ քարոզարշավը կսկսի հայոց հոգեւոր կենտրոնից՝ Էջմիածնից, որտեղ հանրահավաք կանցկացնեն:

Հիբրիդային հարձակում

Այնպիսի հիբրիդային պատերազմ, նման հոգեբանական տեռոր, որ եվրոպացի առաջնորդներն իրականացրին հայ ընտրողների նկատմամբ, դժվար է պատկերացնել, որ կարող են որեւէ այլ երկրում անել, եւ որեւէ այլ երկիր դա կհանդուրժի: Իսկ եթե հանկարծ այդ տեռորի մեկ տասներորդական մասն իրականացներ Ռուսաստանը կամ ՀԱՊԿ որեւէ երկիր, պատկերացնում եմ, թե ինչ աղմուկ կբարձրանար, ինչ լուտանքներ կտեղային նրա հասցեին: Անգամ մեկ տոկոսի հավանականություն չկա, որ ԵՄ գագաթնաժողովին ժամանած լիդերները չգիտեին, որ հունիսի 7-ին Հայաստանում ընտրություններ են կայանալու: Մեկ տոկոսի հավանականություն չկա նաեւ, որ այդ լիդերները չգիտեն, թե ինչ է կատարվել Հայաստանում վերջին 8 եւ հատկապես վերջին 6 տարիներին, եւ ինչ ահռելի դժգոհություն կա կուտակված Նիկոլ Փաշինյանից ու իր իշխանությունից: Վստահաբար, գիտեն նաեւ, որ վերջին 6 տարում առնվազն 6 անգամ իշխանափոխությանն ուղղված փորձեր են իրականացվել, փողոցներ ու հրապարակներ լցվել, ստորագրահավաքներ արվել, ամբողջ հանրությունը գոնե 2021 թվականին միահամուռ պահանջել է Նիկոլ Փաշինյանի հրաժարականը, բայց տարբեր մանիպուլյացիաներով եւ ոչ շատ գրագետ մարդկանց վախերից ու անտեղյակությունից օգտվելով՝ փաշինյանական իշխանությունը վերարտադրվել է՝ թույլ չտալով, որ գրագետ ու բացասական զարգացումները կանխատեսող մարդիկ վճռեն իրենց երկրի ապագան: Պարզ է, որ եվրոպացի հյուրերը նաեւ գիտեն, թե հայ ժողովուրդն ինչքան էմոցիոնալ է, ինչ ակնածանք ունի Եվրոպայի ու եվրոպացիների հանդեպ, եւ ինչ մեծ դեր կարող է խաղալ իրենց աջակցությունը Փաշինյանին: Պարզ է նաեւ, որ քաջ հասկանում են, թե ինչ մեծ անամոթություն է Հայաստանի ներքին կյանքին նման կոշտ միջամտությունը եւ հայ ընտրողի կամքի վրա բռնանալը: Եվ դա գիտակցելով արեցին:

ՔՊ շարքերում խոր անորոշություն է, ցուցակի 50-յակում չընդգրկվածները չեն թաքցնում, որ անկյուն են մղվել եւ չեն պատրաստվում իրենց կոտորել՝ քարոզչությամբ զբաղվել: Փաշինյանը որոշել է պաշտոնական քարոզարշավին ցուցակի առաջին 50-յակի հետ շրջել, եթե բացականեր լինեն, նոր հաջորդ համարները կգնան: Եվ 50-ից հետո ընդգրկվածների թիվ մեկ խնդիրը դարձել է իրենց ապագա աշխատավայրի եւ մերձավորներին տեղավորելու հարցը: Չնայած Փաշինյանը վարչության անդամների միջոցով փոխանցել է, որ ոչ մեկն անգործ չի մնա, եթե հաղթեն, բայց պետք է ընտրություններին բոլորը «վիզ դնեն», սակայն նրանք վստահ չեն հաղթանակի հարցում եւ չեն հավատում ստելու մեծ վարպետ Փաշինյանի խոստումներին:

ՏԵՔՍՏԸ ՈՉ ՈՔ ՉԻ ՏԵՍԵԼ

Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը գրեթե մեկ ամիս է՝ նիստեր չի գումարել: Ըստ արդարադատության նախարարության՝ վերջին նիստը տեղի է ունեցել ապրիլի 1-ին, նախարար Սրբուհի Գալյանի գլխավորությամբ քննարկվել են գործադիր իշխանությանը վերաբերող կարգավորումները, ինչպես նաեւ՝ սահմանադրության ընդունման կարգի փոփոխության եւ հանրաքվեի վերաբերյալ կարգավորումները: Նիստից մոտ 10 օր առաջ էլ Գալյանը հայտարարեց, որ տեքստն արդեն պատրաստ է, այն կուղարկվի ՔՊ վարչության քննարկմանը: Թե ինչ կապ ունի իշխող կուսակցությունը ՀՀ սահմանադրության նախագծի հետ, պարզ չէ, բայց մենք տեղեկացանք, որ ՔՊ վարչությունում սահմանադրության տեքստը չեն քննարկել եւ անգամ չեն տեսել: Հպանցիկ խոսակցություն է գնացել այդ մասին, եւ Փաշինյանն ասել է, որ դրա ժամանակը չէ՝ ընտրություններից հետո կանդրադառնանք: Ոչ էլ սահմանադրական բարեփոխումների խորհուրդն է տեսել սահմանադրության որեւէ պատրաստի տեքստ: Ավելին, խորհուրդը շուրջ մեկ ամիս է՝ նիստեր չի հրավիրում, թե ինչու՝ խորհրդի անդամ Դանիել Իոաննիսյանը երեկ մեզ ասաց, որ, հավանաբար, նախընտրական ծանրաբեռնվածության պատճառով է, որ նիստեր չեն անցկացվում, այն դեպքում, երբ առաջ շաբաթը մեկ նիստեր էին գումարում, եւ հայտարարել էին, որ մինչեւ ընտրությունները սահմանադրության տեքստը կհրապարակվի: Թե ինչու է գործընթացը կանգ առել՝ ՔՊ մեր աղբյուրները չեն թաքցնում, որ սպասում են ընտրությունների արդյունքներին, որից կախված կլինի՝ հնարավոր է հանրաքվե անել, թե՝ ոչ: Բանն այն է, որ տեքստը հանրաքվեի դնելու համար ՔՊ-ին սահմանադրական մեծամասնություն է հարկավոր կամ էլ՝ կոալիցիոն գործընկերներ, համախոհներ, ուստի չարժե ժամանակ վատնել, երբ անհայտ է իրենց եւ, ըստ այդմ՝ հանրաքվեի ճակատագիրը:

ԳՅՈՒՄՐԻ

Նիկոլ Փաշինյանը, ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը եւ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնն այցելել էին Գյումրի: Մակրոնը հարգանքի տուրք էր մատուցել 1988-ի երկրաշարժի զոհերի հիշատակին, ապա Գյումրու Վարդանանց հրապարակում ներկա էին գտնվել «Երաժշտական կամուրջ. Հայաստան-Ֆրանսիա» խորագրով համերգին: Մակրոնը ողջույնի խոսքով դիմել էր հրապարակում հա-

ԹԱԹԱ ՍԻՄՈՆՅԱՆԻ, «ՌԵԻՆԿԱՐՆԱՑԻԱՅԻ» ՀԱՄԵՐԳՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԷԼ Է ՀՐԱՊԱՐԱԿԸ ԼԵԹ-ԼԵՑՈՒՆ ԵՂԵԼ

վաքվածներին՝ շնորհակալություն հայտնել ջերմ ընդունելության համար: «Երբ Ֆրանսիայում նախագահ Մակրոնի հետ խոսում էինք, ես իրեն ասում էի՝ Դուք Հայաստանում շատ մեծ ժողովրդականություն եք վայելում, ինքն էլ ասում էր՝ երեւի չափազանցնում ես: Հիմա ամեն անգամ, երբ այսպիսի տեսարան է լինում, ես անընդհատ իրեն հիշեցնում եմ, որ, տես՝ չէի չափազանցնում»,- ասել է Նիկոլ Փաշինյանը եւ խոսքը փոխանցել Ֆրանսիայի նախագահին: Նա նշել է, որ ոչ ոք չի մոռացել 1988 թվականի դեկտեմբեր ամիսը, երբ ժամացույցները կանգ առան, ամբողջ քաղաքը քարացավ, ու աշխարհը ոտքի կանգնեց՝ «քեզ համար, Հայաստան», եւ Գյումրին վերածնվեց դժոխքից, ու ձմեռվանից հետո նոր գարուններ եկան:

«Եվ մեկնելուց առաջ ցանկանում էի ձեզ ասել, որ չափազանց հպարտ էի՝ լինել այստեղ՝ ձեր կողքին: Մենք գիտենք բոլոր այն դժվարությունները, որոնց միջով դուք անցել եք այս վերջին տարիներին: Եվ քանի դեռ Գյումրին այստեղ է, Հայաստանն առաջ է գնում խաղաղությամբ, կայունությամբ՝ Եվրոպայի կողքին: Եվ ինչպես մենք ձեր կողքին էինք 1988 թվականի դեկտեմբերին, այնպես էլ կլինենք հիմա ձեր կողքին: Շնորհակալություն, Գյումրի, շնորհակալություն, Հայաստան: Եվ երբեք չմոռանաք՝ Ֆրանսիան սիրում է ձեզ: Կեցցե Հայաստանը, կեցցե Ֆրանսիան եւ կեցցե Գյումրին»,- ասել է Էմանուել Մակրոնը:

Տեսակետներ կան, որ Նիկոլ Փաշինյանը համերգի վայրը՝ Գյումրին, հատուկ էր ընտրել, որ ռեւանշ վերցնի՝ նախորդ անգամ Գյումրին նրան վատ էր ընդունել, ուզում է ամեն գնով գյումրեցիներին «կոտրել»: Գյումրիում Փաշինյանը 2025-ի ՏԻՄ ընտրություններում պարտություն է կրել, ապա կալանավորել է նրա համայնքապետին ու թեմի առաջնորդին, եւ այդ վերաբերմունքը բնական է: Գյումրեցի քաղաքագետ **Գագիկ Համբարյանը**, մեզ հետ զրույցում անդրադառնալով երեքշաբթի օրվա համերգին եւ Մակրոնի այցին, ասում է. «Գյումրեցիներին հնարավոր չէ կոտրել, ինչ վերաբերում է համերգին, ապա ժողովրդի գերակշիռ մասը համերգ էր գնացել՝ երգիչներին լսելու, այլ ոչ թե Նիկոլին տեսնելու: Հիշեք Գյումրիում տապալված «Վարչաբետնի» համերգը, որը փաստացի ձախողվեց, եւ կարծում եմ՝ այս մասով հարցեր չեն առաջանա: Եթե Փաշինյանի համար եկող լինեին մարդիկ, «Վարչաբետնին» էլ կգնային: Նիկոլի վիճակը Գյումրիում ծայրահեղ վատ է: Ինքնահաստատման նրա բոլոր փորձերն այստեղ ձախողվում են: Յոթ վերք եկեղեցու ֆեյք պատարագը, «Վարչաբետնի» խայտառակ դատարկ համերգը եւ այլն: Նա շարունակ փորձեր է անում՝ Գյումրիում ինքնահաստատվելու: Գիտի, որ գյումրեցիները Ֆրանսիայի հանդեպ թուլություն ունեն, քանի որ երկրաշարժից հետո Ֆրանսիան ահռելի օգնություն տվեց: Պատահական չէ, որ մայիսի 5-ին եկան Գյումրի, եւ Մակրոնը խոսեց երկրաշարժի զոհերի մասին, հուշարձանին ծաղիկներ դրեցին եւ այլն: Նիկոլն այս քայլերով ինքնախաբեությամբ է զբաղվում: Այդ լեփ-լեցուն հրապարակը բոլորովին Նիկոլի համար չէր: Մարդիկ եկել էին անվճար համերգ նայելու: Ոչ մի նիկոլական բան ես այդտեղ չտեսա: Նիկոլական լրատվամիջոցները գրում են, որ Գյումրու հրապարակը լցրել են, բայց Թաթա Սիմոնյանի համերգի ժամանակ, «Ռեինկարնացիայի» համերգների ժամանակ էլ է մեր հրապարակը լեփ-լեցուն եղել, այդ բոլորը Նիկոլի ֆեստիվալների շրջանակում է կազմակերպվել, բայց դա բնավ չի նշանակում, որ Նիկոլին փառաբանելու համար են մարդիկ գնացել: Ոչ: Նման բան չկա: Այ, եթե «Վարչաբետնի» համերգն էլ լեփ-լեցուն լիներ, ես չէի առարկի, կասեի՝ իսկապես մարդիկ եկել են Նիկոլի համար: Ինձ շատ հետաքրքիր է, թե հայաստանյան արեւմտամետ քաղհասարակությունն ինչ է մտածում Մակրոնի հայտարարությունների մասին: Եթե Պուտինն այսպես լկտիաբար միջամտեր Հայաստանի ներքին հարցերին եւ խորհուրդներ տար հայաստանցիներին, ի՞նչ կանեին իրենք: Ինչո՞ւ հիմա ձայն չեն հանում: Մակրոնը Գյումրիում բացահայտ միջամտեց Հայաստանի ներքին հարցերին, բացահայտ ուղղորդեց ընտրողներին եւ հորդորեց ընտրել Նիկոլին: Նրա այցը, առհասարակ, միայն Նիկոլի գովազդի համար էր: Մակրոնի այցի ընթացքում գոնե մեկ տնտեսական համագործակցության փաստաթղթի տակ ստորագրվե՞ց: Արեւմուտքի ուղղությամբ շարժվող երկրին առաջին հերթին պետք է իր կախվածությունը նվազեցնի ՌԴ-ից եւ ԵԱՏՄ շուկայից: Փաստը մնում է փաստ, որ Նիկոլի կառավարման 8 տարիներին Ռուսաստանից կախվածությունը կրկնապատկվել է: Օրինակ՝ նույն Ուկրաինան արել է ամենավերջին հակահայ քայլերը՝ 44-օրյա պատերազմի ժամանակ, բայց Նիկոլն ընդունեց Զելենսկուն մեծ ուրախությամբ, սակայն Բելառուսի նախագահի մեկ բառը սվիններով են ընդունում: Նիկոլի կառավարման տարիների ընթացքում Բելառուսը դարձել է մեր արտահանման 10 ամենախոշոր շուկաներից մեկը: Այսքան գովերգում են Մակրոնին եւ Ֆրանսիային, հարց՝ ո՞ւր են հայ-ֆրանսիական համատեղ տնտեսական հարաբերությունները: Ֆրանսիայի եւ Հայաստանի տնտեսական կապերը որտե՞ղ են երեւում: Մարդն ընդամենը բացահայտ Նիկոլի գովազդով զբաղվեց, այն էլ՝ հակառուսական ագրեսիվ խոսույթով: Կեղծ տեղեկություններ տարածեց, թե իբրեւ 44-օրյայի ժամանակ Ռուսաստանը Հայաստանի կողքին չի կանգնել: Հարց՝ նույն 2020 թ. նոյեմբերի տխրահռչակ հարցազրույցում Պուտինը հայտարարեց նախ, որ Նիկոլը դավաճան չէ՝ փրկելով վերջինիս իշխանությունը, ապա հավելեց, որ ողջ պատերազմի ժամանակ շուրջ երկու անգամ փորձել է կանգնեցնել պատերազմը եւ հայտարարել զինադադար, սակայն դրանք՝ երկուսն էլ Փաշինյանի կողմից մերժվել են: Իսկ այդ նույն Մակրոնը Մուրադ Փափազյանին, որը ֆրանսահայ ամենակարկառուն ներկայացուցիչներից է, ժամանակին բողոքել է Փաշինյանից՝ ասելով, թե Փաշինյանը բացարձակ Հայաստանի ու Արցախի շահերը չի պաշտպանում, ավելին՝ 2022-ին Պրահայում ինքն է ՀՀ-ի շահերը պաշտպանել: Հիմա պարզվում է, որ՝ ոչ, պարզվում է՝ Նիկոլը խիզախ ու քաջ տղա է: Լավ, ենթադրենք՝ ՌԴ-ն վատ դաշնակից է, նույն Մակրոնն էլ ասաց, որ կա անվտանգության հետ կապված խնդիր: Ռուսական ռազմաբազայի փոխարեն ի՞նչ առաջարկեց նա՝ ոչ մի բան»:

Էջը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ՍԻՐՎԱԾ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՓԱԿԵԼՈՒ ՊԱՏՃԱՌԸ ՉԵՆ ԱՍԵԼ

Դերասան, հաղորդավար Խորեն Լեւոնյանն օրերս խոսել է Հանրային հեռուստաընկերությունից իրեն հեռացնելու պատճառների մասին. «Նոր տարվա ֆիլմում, որն իրենք նկարահանել էին, ինձ առաջարկվեց կարդալ ձայն: Տեքստը նայելուց հետո հասկացա, որ դա ինձ սազական չէ, որովհետեւ ոնց որ ծաղրես այն ամենը, ինչ 15 տարի ստեղծել ես, նկատի ունեմ «Երգ երգոց»: Բացի այդ, իմ պայմանագրում կետ չկա, որ ես ինչ-որ բան պետք է անեմ կամ՝ չէ: Եվ տարբեր պրոդյուսերներ էին անընդհատ ինձ հետ կապվում, ասում էին՝ այդ տեքստը խնդրում ենք ... Նրանց ասացի՝ խնդիր չկա, պարզապես մի քանի բան խմբագրեք, որովհետեւ տեքստում նկատեցի միտում, որ կարծես ձեռք առնեին իմ հայերեն գրական խոսելը: Նաեւ՝ գուսանների, աշուղների տարիների աշխատանքը ոնց որ ցանկանային ծաղրել: Ասացի. խնդրում եմ՝ խմբագրեք, եւ կկարդամ: Նորից պնդեցին՝ չէ, չի լինի, պատասխանեցի՝ չեմ կարդա, խմբագրեք, թող ուրիշ տեսքով լինի: Չեմ ուզում ասել, թե ում անունն էր նշված, բայց կոնկրետ մարդկանց՝ գուսանների, աշուղների էր վերաբերում ու վիրավորական էր»: Լեւոնյանի այս մերժումից որոշ ժամանակ անց էլ որոշում է կայացվել նրան հեռացնել Հ 1-ից: «Ժողով էր արել, նստել-քննարկել են ինձ, ասել են՝ այս բանը չի արել մեզ համար, թեկնածությունս դրել են հեռացման: «Սպասիր ինձ» հաղորդաշարի նկարահանման էի երկու օր անց: «Երգ երգոցից» էլ հիմա կրկնություններն են ցույց տալիս, որ չգիտեմ՝ ինչ լինի...»,- ասել է նա:

«Երգ երգոց» նախագիծը փակվել է դեռ 2020 թվականին, սակայն հաղորդումը եթերազրկվելուց 6 տարի անց Հ1-ը պարբերաբար կրկնում է «Երգ երգոցի» հին հաղորդաշարերը: Հարց է առաջանում.եթե այդքան պահանջված հաղորդում է, որ մինչ օրս կրկնում եք հին հաղորդումները, ինչո՞ւ է եթերազրկվել: Դեռ 2020-ին տեսակետներ հնչեցին, որ հաղորդումը եթերազրկելու պատճառը դրա ազգային բովանդակությունն է, քանի որ օրվա իշխանություններն ատում են ցանկացած ազգային երեւույթ: Այսքան պատահականություն չի կարող լինել՝ բուհերի հայագիտական առարկաները դարձրին կամընտրական, դպրոցներից սկսեցին հեռացնել փառքի անկյունները, Արարատ սարի պատկերը, ցեղասպանության հարցը բարձրացնելը, «Արցախ» բառը:

«Երգ երգոց» հաղորդաշարի սցենարի հեղինակ, լեզվաբան **Լեւոն Գալստյանից** հետաքրքրվեցինք՝ ինչո՞ւ Հանրայինը որոշեց եթերազրկել սիրված հաղորդումը, կա՞ն արդյոք նմանօրինակ հաղորդումներ հայկական հեռուստաեթերում: Գալստյանն ասաց. «Պատճառը չգիտեմ: Ոչ մի պատճառաբանություն: Հանրության արձագանքը դրական էր՝ հաղորդման մասին, մարդիկ այն սիրով էին դիտում, դիտում էին ոչ միայն Հայաստանում, այլեւ՝ սփյուռքում: Տարբերությունը մյուս երաժշտական հաղորդումներից այն է, որ խոսվում է երգի մասին, ժամանակի մասին: Վերլուծում էին՝ երգելուց բացի: Սոսկ երգեր չէին հնչում, այլեւ խոսվում էր երգի ժամանակաշրջանի, մշակույթի մասին եւ այլն: Ես որքանով հետեւում եմ հեռուստաաշխարհին, նման հաղորդում չկա: Որեւէ ալիքով չեմ տեսել, համենայնդեպս»: Գալստյանը նաեւ խոսեց Խորեն Լեւոնյանի՝ Հ1-ից հեռանալու մասին. «Չգիտեմ, թե Խորենի հեռանալը որքանով է կապված մեր հաղորդաշարի փակման հետ, սակայն ես տեսա, որ նրան ստիպել են ծաղրել գուսաններին, իսկ նա հրաժարվել է: Նա ճիշտ է վարվել: Այլ մանրամասների ծանոթ չեմ, սակայն կիսում եմ նրա տեսակետը»:

ՍԿԶԲՈՒՆՔ (վերնագրի կողքին՝ «ՍԻՆՏԱԳՄԱ»)

ԶԵԼԵՆՍԿԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ Է ՌՈՒՍՆԵՐԻ ԴԵՄ, ԲԱ ՆՈ ՉԷ՞Ր ԳԱԼՈՒ ՊՈՒՏԻՆԻՆ ԳՈՎԵՐ

Երեքշաբթի օրը Հայաստանի հանրային ռադիոյի «Երեւանի ձայնը» եւ «Առանց տողատակի» հաղորդումներին հյուրընկալվել էր Բելառուսի ընդդիմադիր գործիչ, նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի մրցակից ու քննադատ, արտերկրում ապաստանած քաղաքական ակտիվիստ Սվետլանա Տիխանովսկայան: Նա Լուկաշենկոյին սուր քննադատության է ենթարկել Հայաստանի Հանրային ռադիոյի եթերում: Հայաստանում ընթացող ԵՄ գագաթնաժողովի շրջանակներում այլ եվրոպացի գործիչներ եւս բարձր ամբիոնից քննադատում էին Ռուսաստանը, իսկ Ուկրաինայի նախագահ Զելենսկին ուղղակի սպառնում էր մայիսի 9-ի Հաղթանակի շքերթին դրոններ ուղարկել Մոսկվայի Կարմիր հրապարակ: Այս ամենը ԵԱՏՄ անդամ երկրների, Ռուսաստանի եւ Բելառուսի կողմից շատ սուր է ընկալվում: Մենք մի քանի հարց ուղղեցինք 100-ամյակը նշող Հանրային ռադիոյի տնօրեն **Արմեն Քոլոյանին**:

- Տեսակետներ կան, որ Հանրային ռադիոն՝ իշխանությունների հետ սինքրոն, սրում է հարաբերությունները Ռուսաստանի, հիմա արդեն՝ նաեւ Բելառուսի հետ: Տիխանովսկայայի ելույթը ձեր եթերում այդպես է ընկալվել:

- Որեւէ նման խնդիր չունենք, մենք որեւէ մեկի հետ չենք ուզում հարաբերությունները փչացնել կամ սրել: Այդ մարդը Բելառուսի ընդդիմության լիդերն է, եկել է Հայաստան, մասնակցել է եվրոպական համայնքի հավաքին: Լիքը հետաքրքիր մարդիկ են հրավիրված եղել, մենք էլ որոշեցինք նրան հրավիրել: Ամեն ինչ պատմեց՝ իր տեսանկյունից: Եթե Բելառուսի իշխանության ներկայացուցիչը գա մեզ մոտ, ցանկանա հարցազրույց տալ, հակառակ տեսակետը հայտնի, մեր միկրոֆոնը բաց է նաեւ նրանց համար:

- Իսկ ինչո՞ւ որոշեցիք հենց նրան եթեր տալ, այն էլ՝ երկու հաղորդման շրջանակներում, գուցե իշխանություննե՞րն են հուշել:

- Ոչ, իշխանությունները ոչ մի կապ չունեն: Անկեղծ եմ ասում՝ իշխանությունը ոչ մի բան չի ասել: Մենք տեղյակ էինք, որ Տիխանովսկայան եւս Հայաստանում է, որոշեցինք պարզապես, որ նրան եթեր տանք: Ես նրան առաջին անգամ տեսա իմ կյանքում, թեպետ, երբ «Ազատությունում» էի աշխատում, շատ-շատ եմ նրան լուսաբանել: Բելառուսի ընտրություններ, իշխանություն-ընդդիմություն առճակատում եւ այլն: Ամեն ինչ անձամբ ես էի լուսաբանում, բայց ես անձնական մոտեցում չունեի: Հետաքրքիր մոտեցում ունի նա, բնակվում է դրսում, քանի որ Բելառուսում նրան կձերբակալեն, նա քաղաքական դեմք է Եվրոպայում: Այդ տրամաբանությամբ՝ տեսակետներ կան նաեւ, թե ինչու է Զելենսկին եկել Երեւան, ասել է, թե Ռուսաստանը ծանր է ընդունել այդ փաստը եւ կշտամբում է Հայաստանի իշխանություններին: Ես իշխանություններին չեմ պաշտպանում, բայց Զելենսկին լավ է արել, որ եկել է Հայաստան: Ենթադրենք՝ նա եկավ, ռուսների՞ց պետք է հարցնենք, թե ում ընդունենք մեր երկրում:

- Ասում են, որ սրանով սադրում ենք Ռուսաստանին, իսկ Ռուսաստանի բարկությունը կարող է շատ թանկ նստել Հայաստանի վրա: Գուցե Ռուսաստանը լավ դաշնակից չէ, բայց հաստատապես՝ վտանգավոր թշնամի է.... նույնը ասում են նաեւ Բելառուսի մասին:

- Գիտե՞ք ինչ, երբ Ռուսաստանը պատերազմի ժամանակ ընդունում էր Ալիեւին, կամ երբ Բելառուսն Ալիեւին զենքեր էր վաճառում, Ռուսաստանը նույնպես զենք էր վաճառում նույն Ադրբեջանին, եւ հայտարարում էին, որ դա իրենց բիզնեսն է ընդամենը: Էդ ո՞նց է ստացվում բա էդպես: Ինչեւէ, մենք ունենք մեր տեսակետը, նրանք ունեն իրենց տեսակետը: Օրինակ՝ ես պետք է գնամ Ռուսաստանի դեսպանատուն եւ մասնակցեմ մի միջոցառման, որը նվիրված է Հայրենական մեծ պատերազմին եւ ԽՍՀՄ-ի հաղթանակին: Իմ քեռին եւ հորեղբայրը զոհվել են այդ պատերազմում, ես հարգանք ունեմ նրանց հիշատակի առաջ, մենք հազարավոր հայրենակիցներ ենք կորցրել այդ պատերազմում, մարշալներ ու գեներալներ ենք տվել, ես հո չե՞մ կարող ուրանալ այդ ամենը, սակայն այդ միջոցառմանը գնալու եմ որպես Ռադիոյի տնօրեն, ես հարգում եմ նրանց հիշատակը եւ մեր ներդրումները: Հիմա ի՞նչ, ես ասեմ՝ մենք Ռուսաստանին չենք սիրում, եւ չգնա՞մ, ինչո՞ւ չգնամ: Նույնն էլ ռուսների մասին է, եթե ուզում են, թող գան, մեզ հետ զրուցեն, մեր դռները բաց են բոլորի առաջ:

- Բայց Զելենսկին ոչ միայն Հայաստան էր եկել, այլեւ Ռուսաստանին Երեւանից սպառնաց: Ընդդիմությունն ասում է, որ նման հայտարարությունները Հայաստանի համար խնդիրներ կարող են առաջացնել: Եթե Փաշինյանը չուզենար, նման հայտարարություններ Երեւանում չէին կարող հնչել:

- Դե, այդ հարցին թող պատասխանեն պետական այրերը: Ես ո՛չ Զելենսկուն պաշտպանելու, ո՛չ էլ քլնգելու, քննադատելու համար լիազորություններ ինձ վրա չեմ վերցնում: Զելենսկին ինչ-որ բան է ասել, թող ՌԴ-ն արձագանքի, Я тут причём.... Պատերազմում է ռուսների դեմ, բա հո չէ՞ր գալու Պուտինին գովեր: Տասնամյակներ առաջ ես սովորել եմ Մոսկվայում, ապրել եմ հանրակացարանում, եթե այն ժամանակ ինձ ասեին, որ ռուսներն ու ուկրաինացիները 2020-ականներին կարող են պատերազմել իրար դեմ, ես կմտածեի, որ նման բան ասողները գժանոցից են փախել, բայց ամենաասարսափելի բաներն անգամ կարող են պատահել մեր կյանքում: Զելենսկին եկել էր, իր տեսակետը հայտնեց: Թե ինչու այստեղ նման հայտարարություններ արեց, դրան պետք է արձագանքեն մեր ղեկավարները:

- Ի դեպ, Բելառուսի ԱԳՆ-ն բողոքի նոտա է հանձնել Հայաստանի դեսպանին՝ ԱԺ նախագահի հայտարարությունների պատճառով:

- Մենք լուսաբանող ենք ընդամենը: Եթե Բելառուսի դեսպանատան ներկայացուցիչները կցանկանան Հանրային ռադիո այցելել, մենք նրանց պատրաստ ենք ընդունել, ավելին՝ մենք նրանց հրավիրում ենք մեզ մոտ: Մենք շատ լավ հարաբերություններ ունենք բելառուսցի ժողովրդի հետ:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԵԿ ԴԵՐԱՍԱՆԻ ԹԱՏՐՈՆԻՑ ԹԱՇԻՆՅԱՆՆ ԷԼ Է ՀՈԳՆԵԼ

Երեկ խորհրդարանում կառավարության հետ հարցուպատասխանն անսպասելի եւ դրամատիկ ընթացք ստացավ, այն տեւեց բառացիորեն մի քանի րոպե եւ կարող էր դառնալ ՔՊ-ի, Փաշինյանի ու ՔՊ-ական իշխանության փառաբանման ցերեկույթ, եթե վերջինս հավես ունենար ու ընթացք տար քանիցս բեմականացված սցենարին: Ընդդիմադիրները, վերջին մի քանի նիստերի պես, բոյկոտել էին հարցուպատասխանը, նրանք, մեր տեղեկություններով, չեն պատրաստվում մինչեւ հունիսի 7-ի ընտրությունները ներկայանալ այս ձեւաչափով ԱԺ նիստերին, որպեսզի հնարավորություն չտան «կռուտիտի» ու դեմագոգիայի մեծ վարպետ Նիկոլ Փաշինյանին ինքնադրսեւորվել ԱԺ ամբիոնից եւ անվճար փիառի առիթ ստեղծել, ուստի ՔՊ-ն կրկին մենմենակ է մնացել: Կարող էին, իհարկե, նախապես գրված հարցեր տալ, իրար դիֆերամբներ ձոնել, ստախոսությամբ զբաղվել, որոնց հակադարձող չէր լինի, սակայն պարզվեց, որ մեկ դերասանի թատրոնից այստեղ էլ են հոգնել: Նիստը սկսվելուն պես հայտարարվեց պատգամավորների գրանցում, սակայն կառավարությանը հարց տալու համար գրանցվեց ընդամենը երեք ՔՊ-ական պատգամավոր, ընդ որում՝ նրանցից երկուսը նախապես հայտարարեցին, որ հանում են իրենց հարցը, մնաց միայն Հռիփսիմե Գրիգորյանը, որի ամուսինն ԱԳՆ գլխավոր քարտուղարն է, ինքն էլ՝ Արարատ Միրզոյանի անթաքույց եւ մոլի ֆանատը: Բայց պարզվեց՝ տիկինն էլ հարց չուներ, ընդամենը գրանցվել էր Փաշինյանին եւ իրենց՝ բոլորին, շնորհակալություն հայտնելու ու իբրեւ թե փոխանցելու հատկապես գյումրեցիների շնորհակալությունները՝ Փաշինյանի ու Ֆրանսիայի նախագահ Մակրոնի այցելության եւ համերգի առիթով: Հռիփսիմե Գրիգորյանը հիշատակեց Հայաստանում անցած օրերին անցկացված ԵՄ քաղաքական համայնքի գագաթնաժողովը եւ Գյումրու միջոցառումը: Նա սրտաճմլիկ, հուզված ձայնով՝ ասմունքի երեկոյի մասնակցի առոգանությամբ արտասանեց. «Շնորհավորում եմ մեզ՝ բոլորիս, Հայաստանում իսկապես մեծամասշտաբ, աննախադեպ ես միջոցառումների հաջող ու գեղեցկագույնս կազմակերպման առթիվ: Մարդիկ մեզ ասում էին, որ իրենք խնդրում էին մեզ փոխանցել մեր բոլոր պաշտոնյաներին, պարոն վարչապետ, Ձեզ, մեր բոլոր, բոլոր գործընկերներին, իրենց հպարտությունը դժվար է բառերով փոխանցել, ուղղակի պետք է տեսնել էդ մարդկանց դեմքերը, զգալ իրենց տրամադրությունը, զգալ էն երջանկությունը, ուրախությունը, որ երեկ տիրում էր Գյումրիում, ոչ մի բան, ոչ մի եղանակային պայմաններ, ոչինչ չէր կարող դա փոխել: Ես, իմ գործընկերներն ուղղակի զգացել ենք, որ զգացողությունները երկար կմնան մեզ հետ: Ես վստահ եմ, որ ով որ երեկ էնտեղ է եղել ու անգամ թեկուզ էկրաններով հետեւել է, ունի զգացողություններ: Մի խոսքով, շնորհավորում եմ բոլորիս ու շնորհակալ եմ յուրաքանչյուրին, ով որ էստեղ ունի իր ներդրումը: Շնորհակալ եմ»: Լալահառաչ ձայնով, մի շնչով արտաբերեց ՔՊ-ական տիկինը, Ալեն Սիմոնյանն էլ փորձեց մանկապատանեկան հանդեսի մթնոլորտը ցրել եւ հետաքրքրվեց՝ իսկ հարց ունի՞ պատգամավորը, բայց ստացավ բացասական պատասխան եւ հայտարարեց նիստի ավարտի մասին:

Մենք տեղեկացանք, որ Նիկոլ Փաշինյանն է խորհրդարան գալուց առաջ ՔՊ խմբակցության ղեկավարներին հրահանգել, որ հարցեր չտան: Թե ինչու, մեզ մանրամասներ չհայտնեցին, սակայն մեր աղբյուրներն իրենց վարկածները ներկայացրին, որ նախ՝ վարչապետը հոգնած է, մի քանի օր անքուն գիշերներ է անցկացրել եվրոպացի հյուրերի հետ, ուստի հավես չուներ մի երկու ժամ էլ անիմաստ ջուր ծեծել: Դրանից բացի, ըստ մեր աղբյուրի, արդեն անգամ իրենց հետաքրքիր չէ մեկ դերասանով, առանց ընդդիմության բեմականացված հարցուպատասխանը: Իսկ երեկվա հարցուպատասխանի ժամանակ, անկասկած, ստիպված էին լինելու շարունակել հակառուսական շքերթը, որն իրականացրին Հայաստան ժամանած եվրոպացիները՝ Հայաստանը դարձնելով Եվրոպա-Ռուսաստան հակամարտության թատերաբեմ: Եվ քանի որ Ռուսաստանից շատ սուր են այս գագաթնաժողովի եւ հատկապես Զելենսկու ելույթի արձագանքները, ուստի համարել են, որ դոզան կարող է շատ լինել, եւ Ռուսաստանը կարող է դա այլեւս չհանդուրժել, այդ պատճառով էլ Փաշինյանը որոշել է առժամանակ չխոսել, թողնել, որ իրավիճակը հանդարտվի:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԲԻԶՆԵՍ

ՀՈ ԱՊՈՒՇ ՉԻ՞, ԳԱ, ՄԵԾ ՊՐՈՅԵԿՏ ՍԿՍԻ. ՄԻ ԲԱՆ ԿԱՍԻ, ՎԱՐՉԱՊԵՏԻ ԴՈՒՐԸ ՉԻ ԳԱ, ԿԳԱՆ՝ ԿՁԵՐԲԱԿԱԼԵՆ

Հայտարարվեց, որ Հայաստանում իրականացվող արհեստական բանականության ենթակառուցվածքների զարգացման Firebird մեգանախագիծը ֆինանսավորում են նաեւ հայաստանյան կենսաթոշակային ֆոնդերը: ԱԺ-ում այս մասին է խոսել ԿԲ նախագահ Մարտին Գալստյանը՝ պատասխանելով պատգամավոր Արծվիկ Մինասյանին: Ասել է, որ կենսաթոշակային ֆոնդերի միջոցներն այսօր ահռելի են՝ տրիլիոնից ավելի, եւ դրանց մի մասն այսօր սպասարկում է ՀՀ տնտեսությունը, բայց լավ պրոյեկտներ չկան: «Ստեղծվել է մի պարադոքսալ իրավիճակ, երբ մենք ունենք բավականին մեծ միջոցներ: Թե՛ բանկերը, թե՛ կենսաթոշակային հիմնադրամները ունեն մեծ միջոցներ, երկուսն էլ շատ կապիտալիզացված են, ու փող շատ կա, բայց մենք իրական պրոյեկտների կարիք ունենք՝ լավ պրոյեկտների, որոնք հաճույքով կֆինանսավորվեն այդ երկու կառույցների կողմից»,- նշել է նա:

Ներդրողները չե՞ն ցանկանում երկարաժամկետ ներդրումներ անել, եւ ո՞վ է մեղավոր. մեր հարցերին պատասխանեց ֆինանսների նախկին նախարար, Հանրային ֆինանսների կառավարման միջազգային փորձագետ **Վարդան Արամյանը**: Որպեսզի իրար լավ հասկանանք, նա առանձնացրեց «պրոյեկտ» հասկացության 3 տեսակ. բիզնես պրոյեկտ, որն արդեն պատրաստ է ֆինանսավորման, որում կան քեշ, կանխիկ հոսքերի կանխատեսում եւ այլն, տեխնոլոգիական պրոյեկտներ՝ R and D (Research and Development), որոնք ավելի ժամանակատար են, պահանջում են գիտական բարձր ներուժ եւ մեծ ծախս պետության կողմից, եւ ստարտափներ, որտեղ պետք է լինի պլատֆորմ, երբ գաղափարը ծնվում է, դառնում է որոշակիորեն ֆինանսավորվող նախնական բջիջ, զարգանում՝ դառնալով արդեն բիզնես: Պարզվում է, որ այս բոլոր բիզնես-պրոյեկտների համար էլ հայաստանյան պայմանները վատն են:

- Ինչո՞ւ մենք չունենք լավ պրոյեկտներ: Գուցե դրանք երկարաժամկետ են, ու բանկերը, այլ ներդրողները չե՞ն ուզում ռիսկի գնալ:

- Պետական քաղաքականությունը խիստ կարեւոր է: Նախ, գլոբալ առումով ամբողջ աշխարհում է այդպես: Եթե լավ գաղափար լինի, փողը միշտ էլ կգտնվի: Սա աքսիոմ է: Բայց ի՞նչ է տեղի ունենում Հայաստանի Հանրապետությունում: Ցանկացած պրոյեկտ ունի ռիսկի գործոններ, որը բազմապրոֆիլ է: Որպեսզի ներդրողը կամ բիզնեսը դրա մեջ փող դնի, պետք է ընդհանուր միջավայրը լինի տրամադրող եւ կայուն: Քո ինստիտուտները պետք է նորմալ աշխատեն, դատական համակարգը, իրավունքի գրանցման պետական համակարգը, կառավարության մյուս թեւերը, որոնք լիցենզիաներ են տրամադրում, եւ այլն: Իսկ մենք այսօր ունենք շատ տխուր վիճակ, որովհետեւ կառավարությունում որոշում կայացնողները գնալով քչանում են: Այդ մարդկանց մեղադրել չի կարելի: Ես այդ մասին ասում եմ 19 թվականից: Ակադեմիական աշխարհում պետական չինովնիկի ամենակարեւոր պրոդուկտը, որը նա տալիս է, որոշումն է՝ կայուն, արագ ու արդյունավետ կայացրած որոշումը, որպեսզի բիզնեսը դրա տակ տեղավորվի: Բայց մենք այսօր ի՞նչ ենք տեսնում: Այն հարցերում, որտեղ կա որոշակիորեն դիսկրեցիայի պահ (պաշտոնատար անձի կամ պետական մարմնի կողմից որեւէ հարցի լուծումը սեփական նախաձեռնությամբ՝ Ս. Ս.), պետական չինովնիկը կարող է որոշում ընդունել, ու հաջորդ օրը նրա գործընկերը նրա վրա կարող է գործ տա, գան բռնեն, հավաքեն տանեն, ու վերջ: Ես ուզում եմ տեսնել այն հերոս բիզնեսմենին, որը որ աչքի առաջ ունի Քաջարանի պղնձի կոմբինատը, «Վիվասելը», այլ խոշոր ձեռնարկություններ: Սամվել Կարապետյանի օրինակն էլ բոլորիս աչքի առաջ է: Հո ապուշ չի՞, որ գա, մեծ պրոյեկտ սկսի: Մի օր մի բան կասի, վարչապետի դուրը չի գա, կգան, հաջորդ օրը կձերբակալեն: Այդ իրավիճակում բիզնես միջավայրը խթանող չէ:

- Իսկ տեխնոլոգիական պրոյեկտներն ինչո՞ւ չեն կայանում:

- Տեխնոլոգիական պրոյեկտների մասով մենք միշտ խնդիր ենք ունեցել, որովհետեւ համալսարանական գիտուժը հետ է մնացել: Մեր համալսարաններից միայն Երեւանի տնտեսագիտական համալսարանն է, որն աշխարհում, կարծեմ, 1400-րդ տեղում է: Որպեսզի լավ պատկերացնեք, օրինակ, Դուբայի համալսարաններն աշխարհում 200-յակի մեջ են, ինչը բարձր մակարդակ է: Մերն իր ranking-ով (վարկանիշով՝ Ս. Ս.) 1000-րդից հետ է: Սա քրոնիկ խնդիր է, որը միշտ եղել է:

- Իսկ ստարտափները. դրանք շատ են, դրանց մասին հաճախ խոսում են:

- Ստարտափները կայացնելու համար պետք է լինեն պլատֆորմներ, որտեղ գաղափարը մտնի, եփվի, հետո գնա ինկուբատորներ: Պետք է մի քանի մակարդակ լինի, որ բիզնեսն աճի: Առաջինը սաղմնային կապիտալն է, այնտեղ փող են դնում մոտ 50 հազար դոլարից ոչ ավելի: Հետո էդ գաղափարը գնում է աքսելերատոր, ասենք, 100 գաղափարից 90-ը ձախողվում է, մի 10-ն է «կենդանի» մնում: Էդ 10-ը հետ էգալիս, գնում է արդեն վենչուրային ֆոնդ (ռիսկային, բայց բարձր աճի ներուժ ունեցող ստարտափներին այդ ներդրումային ֆոնդերը տրամադրում են կապիտալ՝ բաժնեմասի դիմաց՝ Ս. Ս.): Սրանցից էլ գոյատեւում է մոտ 25 տոկոսը, 75-ը սովորաբար էլի չեզոքանում է: Որպեսզի էս 25 տոկոսը դառնա բիզնես, պետությունը դեր պետք է ունենա՝ համաֆինանսավորի, ֆոնդեր ստեղծի, գաղափարական ինչ-որ բան: Դրանք կոչվում են տեխնոլոգիական ստարտափի ինկուբատորներ, 100 գաղափարից 90-ը կարող է ձախողվել, մի 10-ը լինել կենսունակ, էդ 10-ը հետ է գալիս, գնում է արդեն վենչուրային ֆոնդը, որոնցից գոյատեւում է 25 տոկոսը: Այս իրավիճակում պետությունը պետք է դեր ունենա, համաֆինանսավորի, ֆոնդեր ստեղծի, գաղափարական աջակցություն: Բայց ո՛չ ԱՆԻՖ-ի նման կառավարման մոդելի, որտեղ չինովնիկները նստած որոշումներ էին կայացնում: Դա այդպես չի արվում: Եթե ֆոնդը ստեղծում ես, անպայման կառավարման պետք է տաս պրոֆեսիոնալների, արհեստավարժի, որոնց համար մասնագիտական ռեպուտացիան է կարեւոր: Օրինակ, եթե ինձ նշանակեն ու ասեն՝ գնա սրան փող տուր, ես չեմ տա, որովհետեւ այդտեղ ռիսկեր կան, իմ ռեպուտացիային վտանգ է սպառնալու: Մարդիկ պետք է լինեն, որոնք կառավարությունից անջատ լինեն, ունենան մեծ արհեստավարժություն, ունենան վարկունակություն:

- Նույն պատճառով էլ կենսաթոշակային ֆոնդերը պետք է ներդրում չանեն:

- Չէ, կենսաթոշակայինի փողերը միշտ գալիս են, իրենք ամեն դեպքում ներքին շուկան լավ են հասկանում: Մարտին Գալստյանը ճիշտ է ասում, երբ նշում է, որ մեզ մոտ կուտակումներ ու խնայողություններ կան: Խնդիրը պրոյեկտի մեջ է, իսկ իմ ասած գործոնները՝ կառավարության ծուլություն, որոշումների կայացման անկարողություն, քաղաքական անկայունություն, տնտեսական մոդելի անկայունություն, գլոբալ աշխարհում դիրքավորման անորոշություն՝ էն, որ չգիտեն՝ մենք Եվրոպայի՞ հետ ենք, թե՞ Ռուսաստանի, այս ամենը խանգարում է:

- Առիթից օգտվելով, հարցնեմ՝ Ռուսաստանի սանկցիաները մինչեւ ո՞ւր կհասնեն: Ամենադաժան կանխատեսումներն են արվում՝ օդը կփակեն, հաղորդակցությունը կդադարեցվի, ատոմակայանը կկանգնի: Կարո՞ղ են ատոմակայանը կանգնեցնել:

- Կարող են, բայց մի փոքր լինենք իրատեսության սահմաններում: Ես չեմ կարծում: Ռուսաստանը, իհարկե, կգնա պատժիչ որոշակի գործողությունների, բայց որ հայերին ամբողջությամբ պոկի իրենից, գցի մի կողմ՝ չի անի:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԷՍ Ի՞ՆՉ Է ՍԱՐՔՈՒՄ ԵՎՐՈՊԱՆ ՄԵՐ ԳԼԽԻՆ

«Հրապարակի» զրուցակիցը հոգեբան **Կարինե Նալչաջյանն** է:

- Եվրոպական քաղաքական համայնքի (ԵՔՀ) 8-րդ գագաթնաժողովն անցկացվեց Երեւանում: Եվրոպացի բարձրաստիճան պաշտոնյաները Նիկոլ Փաշինյանին գովեստի խոսքեր շռայլեցին: Մակրոնն ասաց, որ Փաշինյանը քաջ ու խիզախ առաջնորդ է: Փաշինյանն էլ պետության հաշվին ընտրակաշառք է բաժանում՝ թոշակի բարձրացում, որոշ բժշկական ծառայություններ անվճար են դարձել եւ այլն: Այս ամենը, Ձեր կարծիքով, ի՞նչ ազդեցություն է թողնում քաղաքացիների վրա, հատկապես՝ չկողմնորոշված զանգվածի, կամ առհասարակ՝ ազդեցություն թողնո՞ւմ է, թե՞ ոչ:

- Ազդեցություն անպայման թողնելու է եւ թողնում է, սակայն թե հասարակության որ շերտի վրա, դա է հարցը: Մակրոնի հետ գնում են վազելու, ռեստորան եւ այլն, ուզում են ասել՝ մենք էլ ձեզ նման սովորական մարդիկ ենք, էլի: Այս քայլերով Մակրոնը նաեւ այլ բան է հասկացնում մեր ժողովրդին: Ըստ էության, ասում է՝ վատ մի զգացեք, որ ձեր ղեկավարը նման բաներով է զբաղված, մենք էլ ենք նույն բաներն անում՝ վազում, երգում, պարում: Այս ամենն արվում է մտածված՝ չկողմնորոշված, վախեցած կամ այս իշխանություններով հիացած զանգվածի համար: Մեր ժողովուրդը որոշակի թերարժեքության բարդույթ ունի: Նրան թվում է, թե բոլոր նրանք, ովքեր Եվրոպայում են կամ Ամերիկայում, ուրեմն ավելի բարձր են, ավելի լավն են: Այս ամենը հաշվի առնելով՝ աշխատում են նաեւ մեր ազգի թերարժեքության վրա: Եվրոպային միանշանակ այս իշխանությունն է ձեռնտու՝ Նիկոլով հանդերձ, քան իսկական ընդդիմադիր ուժերը: Նայում ես այս ամենին՝ ծիծաղդ է գալիս: Խոսում են Անգլիայի հետ ռազմավարական դաշնակցությունից: Անգլիան եւ Թուրքիան մեր ամենամեծ թշնամիներն են, եւ հենց նրանք են մեր գլխին այս փորձանքները բերել՝ կազմակերպված ձեւով: Ցավոք, կան մարդիկ, ովքեր այդ անմտություններին հավատում են, խաբվում են: Ամեն դեպքում, ի պատիվ մեր ժողովրդի, ես տարբեր շերտերի հետ եմ շփվում, նկատում եմ, որ մարդիկ իսկապես հիասթափված են իշխանություններից: Քիչ առաջ մի կին՝ մայր, լաց էր լինում իմ կողքին: Ասում էր՝ էս ի՞նչ են անում Հայաստանի հետ, էս ի՞նչ է սարքում Եվրոպան մեր գլխին: Մարդիկ, ովքեր սթափ են, հասկանում են այս ամենի ողբերգական հետեւանքները: Այո, բժշկական ծառայությունները որոշակիորեն անվճար են դարձրել, թոշակներն են բարձրացրել, եւ այդ խայծը մարդիկ կուլ են տալիս, չեն գիտակցում, որ երբ ընտրվեն սրանք, անելու են ճիշտ հակառակը: Շատ փոքր է այն շերտը, որ պատրաստ է սրանց քվե տալու: Շատերն անգամ ասում են, որ ընտրություններին չպետք է հասնեին, հարցերը պետք է վաղուց լուծված լինեին, սակայն ունենք այն, ինչ ունենք: Պետք է հնարավորինս բարձրացնենք մարդկանց ինքնագնահատականը, այնպես անենք, որ քարացած միտքը, որ, միեւնույն է, իշխանությունը հաղթելու է, հօդս ցնդի: Դա վտանգավոր ստերեոտիպ է:

- Մայիսի 28-ին Փաշինյանը որոշել է «պառադ» կազմակերպել:

- Հերթական անգամ մոլորեցնում են մարդկանց: Ուզում են ասել՝ մեզ ասում են անհայրենիք, իսկ մենք «պառադ» ենք անում: Նախընտրական ծուղակների շրջանում ենք ապրում, պետք է շատ զգոն լինենք այս փուլում հատկապես, քանի որ այդ խայծերը մահացու են:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՄ

ՕԳՆԵԼ ՉԵՆ ԿԱՐՈՂ, ԲԱՅՑ ՎՆԱՍԵԼ ԱՐԴԵՆ ՍԿՍԵԼ ԵՆ

Նիկոլ Փաշինյանը, որի պաշտոնավարմանը՝ որպես վարչապետ, ուղիղ մեկ ամիս է մնացել, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ ստորագրել է Հայաստանի Հանրապետության եւ Ֆրանսիայի Հանրապետության միջեւ ռազմավարական գործընկերության հաստատման մասին հռչակագիր: Չնայած փաստաթղթի մեծ ծավալին, այն դատարկ է, որեւէ կոնկրետ գործողություն դրանով նախատեսված չէ, կողմերը ոչ մի ոլորտում որեւէ իրական պարտավորություն իրենց վրա չեն վերցնում՝ լինի դա անվտանգություն, տնտեսություն, թե միգրացիա:

Ֆրանսիան եւ Եվրամիությունը փորձում են Հայաստանը միացնել իրենց ստեղծած հակառուսական դաշինքին: Արդեն 4 տարուց ավելի Եվրամիությունն Ուկրաինայի տարածքում եւ ուկրաինացիների կյանքի գնով պատերազմում է Ռուսաստանի դեմ: Հիմա փորձում է ընդլայնել հակառուսական կոալիցիան եւ դրա մեջ ներգրավել առավել մեծ թվով երկրների: Հայաստանի գործող իշխանությունը, որին ընդամենը մեկ ամսվա կյանք է մնացել, կարծես դեմ չէ դրան, Փաշինյանը համաձայն է ԵՄ ներկայացուցիչների եւ Ուկրաինայի նախագահի հակառուսական հայտարարություններին, համաձայն չլիներ՝ դրանք Երեւանում չէին հնչի: Բայց երբ մի երկիր մտնում է որեւէ ռազմական կոալիցիայի մեջ՝ ստանձնելով որոշակի պարտավորություններ՝ կոալիցիայի մյուս անդամների հետ կողք-կողքի կռվել ընդհանուր թշնամու դեմ, ստանում է նաեւ երաշխիքներ, որ կոալիցիայի անդամներն էլ իրեն կօգնեն, եթե ինքը հարձակման ենթարկվի որեւէ այլ երկրի, առավել եւս՝ այն երկրի կողմից, որի դեմ իրենք կռվում են: Պարզ ասած, եթե Հայաստանի իշխանությունը համաձայնում է Եվրոպայի հետ կռվել Ռուսաստանի դեմ, ապա պետք է երաշխիք ստանա, որ Հայաստանի դեմ Ռուսաստանի հարձակման դեպքում կարող է ակնկալել, որ այդ նույն եվրոպացիները կօգնեն Հայաստանին՝ պաշտպանվելու: Ո՛չ Հայաստանի եւ ԵՄ-ի միջեւ ստորագրված փաստաթուղթը, ո՛չ առավել եւս Հայաստան-Ֆրանսիա ռազմավարական գործընկերության հաստատման փաստաթուղթը որեւէ նման երաշխիք չեն տալիս, որեւէ պարտավորություն չեն ստանձնում՝ օգնելու Հայաստանին՝ ապահովելու իր արտաքին անվտանգությունը: Ի դեպ, Ալիեւի հայտնի ելույթը եւս այդ մասին էր, նա Եվրոպայի առաջնորդներին ասում էր, որ դուք դատարկ փուչիկներ եք, եւ ձեր կազմակերպած երեւանյան միջոցառումն էլ է փուչիկ, դուք Հայաստանին ոչինչ չեք կարող խոստանալ եւ ոչինչ չեք կարող ապահովել, եթե Ադրբեջանը որոշի Հայաստանի դեմ պատերազմ սկսել, դուք բացի հայտարարություն անելուց ոչնչով չեք կարող ազդել ինձ վրա, իսկ ձեր հայտարարությունները որեւէ արժեք չունեն:

Եվրամիությունը եւ Ֆրանսիան՝ մասնավորապես, չեն կարող ոչ միայն ռազմական կամ, այսպես կոչված, անվտանգային փոխհատուցում առաջարկել Հայաստանին, այլեւ նույնիսկ՝ տնտեսական եւ հատկապես՝ էներգետիկ: Հայաստանը պատերազմ է հայտարարում Ռուսաստանին, եւ որպես դրա արդյունք՝ Ռուսաստանը կարող է Հայաստանին ենթարկել տնտեսական պատժամիջոցների, որի առաջին նշաններն արդեն ակնհայտ են. Հայաստանում ռուսական հեղուկ գազի գինը գրեթե կրկնապատկվել է, ու դրա ծանրությունը զգում են քաղաքացիները եւ ոչ թե իշխանության փոքր խմբակը, որը դրանից միայն օգտվում է: Բայց Ռուսաստանն ունի Հայաստանի տնտեսության վրա ազդելու ավելի լուրջ լծակներ, որոնք դեռ գործի չեն դրվել եւ կարող են կիրառվել ընտրություններում Փաշինյանի կողմից իշխանությունը հերթական անգամ բռնազավթելու դեպքում: Ինչ է առաջարկում Ֆրանսիան կամ ԵՄ-ն այդ դեպքում, ինչո՞վ կարող է Եվրոպան փոխհատուցել Հայաստանի տնտեսական կորուստները: Իհարկե, ոչնչով, որովհետեւ ԵՄ-ն՝ ինքը, էներգետիկ ճգնաժամի մեջ է եւ չգիտի, թե ինչպես կամ ինչով պետք է փոխհատուցի Պարսից ծոցի երկրներից ստացվող գազի ու նավթի պակասուրդը:

Մինչ Հայաստանում ընթանում էր Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթնաժողովը, Մոլդովայի մայրաքաղաք Քիշնեւում ընթանում էր Մոլդովա-ԵՄ բարձր մակարդակի 7-րդ էներգետիկ երկխոսությունը: Այդ միջոցառման շրջանակներում ելույթ ունենալով ՝ԵՄ էներգետիկայի եւ բնակարանային շինարարության հարցերով հանձնակատար Դեն Յորգենսենն ասել է. «Աշխարհը բախվում է իր պատմության մեջ, հավանաբար, ամենալուրջ էներգետիկ ճգնաժամին, որը փորձության է ենթարկում մեր տնտեսությունների, մեր հասարակությունների եւ մեր գործընկերային հարաբերությունների դիմակայունությունը»:

Եթե որեւէ մեկը չգիտի, ասենք, որ Մոլդովան Հայաստանի նման եւ նույնիսկ ավելի աղքատ մի երկիր է, որը դժբախտություն ունեցավ հավատալու ԵՄ-ի հետ համագործակցության դեպքում զարգանալու եւ բարգավաճելու խոստումներին, դարձավ ԵՄ անդամի թեկնածու, ստացավ վիզաների ազատականացում եւ դրա փոխարեն զրկվեց իր գյուղատնտեսության համար այդքան կարեւոր ռուսական շուկայից եւ ամենակարեւորը՝ ռուսական էժան գազից: Հիմա Մոլդովայում ոչ միայն էլեկտրաէներգիայի հովհարային անջատումներ են, այլ նաեւ՝ գազի, իրենց հողերը մշակելու փոխարեն մոլդովացիները ստիպված են բատրակություն անել ԵՄ անդամ հարեւան երկրներում: Այդ երկիրը կորցրել է իր բնակչության 20 տոկոսին, եւ դա՝ դեռ պաշտոնական վիճակագրությամբ: Եվ ինչ է ասում ԵՄ հանձնակատար Յորգենսենը ցրտի ու խավարի մեջ խարխափող մոլդովացիներին, ասում է՝ դե, ձեզ վատ մի զգացեք եւ բողոքեք՝ ամբողջ աշխարհում է էներգետիկ ճգնաժամ, եւ ամենակարեւորը՝ դրանում մեզ մի մեղադրեք, մեր հարաբերությունները պետք է դիմանան այս փորձությանը:

Սա ասում եմ՝ հասկանալու համար, թե ինչ են ասելու կամ առաջարկելու ԵՄ չինովնիկները, երբ նույնատիպ խնդիրների բախվի Հայաստանը: Ես չգիտեմ՝ աշխարհում ինչպես, բայց Հայաստանում էներգետիկ ճգնաժամ չկա, այն էլ՝ այնպիսին, որ անվանեք պատմության մեջ ամենալուրջը, բայց դրա հավանականությունն իսկապես կա, ԵՄ-ն իրոք կարող է կազմակերպել՝ օգտվելով Հայաստանի գործող վարչախմբի անհեռատես ու հակապետական քաղաքականությունից: Միակ մխիթարանքը մնացել է այն, որ այդ ռեժիմի գոյությանն ընդամենը մեկ ամիս է մնացել:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԵՐԲ ԽՈՍՔԸ ԼՌՈՒՄ Է ՎԱԽԻՑ, ԱՆԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍՈՒՄ Է ԲԱՐՁՐԱՁԱՅՆ

Արձարանում չորս մարդ սուրճ էին խմում, զրուցում, քիչ անց զրույցը վերածվեց վիճաբանության: Մեկը պնդում էր. «Ինչո՞ւ Նիկոլը չշարունակի Եկեղեցու բարեկարգման գործընթացը՝ ընտրվելուց հետո ավարտին հասցնի»: Մյուսներն ընդդիմանում էին. «Բարեփոխում՝ Եկեղեցու հիմքերը խարխլելո՞վ»: Հայոց բանակից հոգեւոր ծառայությունը վերացվեց, գնդերեցների գործունեությունը դադարեցրին, ՔԿՀ-ներում հոգեւորականների մուտքն արգելեցին, «Հայ եկեղեցու պատմություն» առարկան հանեցին, կաթողիկոսի դեմ արշավ սկսեցին եւ ո՞ւմ հետ՝ Եկեղեցի դավաճանած հոգեւորականների: «Պղծության» դեմ՝ պիղծերով: Նպատակը բարելավումը չէ, մեր ազգապահպանման գլխավոր հիմնասյուներից մեկի՝ Սուրբ եկեղեցու կործանումն է: Հանկարծ նկատեցին, որ կողքից լսում եմ իրենց զրույցը, խոսակցությունը կիսատ մնաց, վախը հաղթեց բոլորին: Վախը: Այն գալիս է անաղմուկ, սողոսկում ամենուր, դառնում չգրված, բայց խստորեն պահվող օրենք: Մարդը լռում է, վախենում է, հետո սովորում է դրան եւ մոռանում, թե ինչպես է հնչում ազատ խոսքը: Երբ վախը դառնում է նորմ, լռությունը ներկայանում է որպես խոհեմություն: Մարդիկ իրենց խոսքը տեղավորում են թույլատրելի սահմանների մեջ: Ծառի շվաքում խմբով զրուցում են, մեկն ասում է. «Զատո Նիկոլը ասֆալտ է փռում ու բռոշկա նվիրում»: Մյուսն ավելացնում է. «Անվճար սիրտս ստենտավորել տվուց, դեղերս էլ հետը տվուց»: Երրորդը վրա է բերում. «Այ ընկեր, Նիկոլն իր հո՞ր, թե՞ իր աշխատած միլիոններից «տվուց»: Էն էլ՝ ընտրությունների նախաշեմին, մեզնից հավաքագրված փողերն է ծախսում ու մեր աչքը խոթում»:

Մարդիկ լռում են տարբեր պատճառներով. մեկի աղջիկը դպրոցում է աշխատում, մյուսինը՝ մանկապարտեզում, մեկի որդին բանակում է, մյուսը որեւէ հիմնադրամից կամ ծրագրից փող է ստանում: Խոսելը կարող է արժենալ թանկ գին՝ աշխատանքի, եկամտի, անվտանգության կորուստ: Եվ այդպես ձեւավորվում է ամենավտանգավոր «համաձայնությունը»՝ ոչ թե համոզմունքից, այլ՝ հաշվարկից: Մարդիկ խոսում են փակ տարածքներում, պատերի տակ, վստահելի մարդկանց հետ, կիսաձայն, քչփչոցով: Հանրային տարածքում լռում են: Բաց է մնում անչափ կարեւոր մի հարց՝ իսկ ո՞վ պիտի ումից վախենա՝ ժողովուրդը՝ իշխանությունի՞ց, թե՞ իշխանությունը՝ ժողովրդից: Ո՞վ է ում ընտրում: Եթե վախը բնակվում է հասարակության մեջ, հասարակության ընտրած իշխանությունը դադարում է լինել հաշվետու: Եթե խոսքը լռում է, անարդարությունը ծաղկում է:

Ընտրությունների նախաշեմ է: Մարդկանց նյարդերը լարված են՝ եւ նրանց նյարդերը, ովքեր հավատավոր նիկոլական են, եւ նրանցը, ովքեր փոփոխությունների կարոտ են: Ոչ ոք հաստատ չի կարող ասել՝ որ ուժն է հաղթելու ընտրություններում: Ամենուր տարակարծություն է, իրարամերժ գնահատականներ, վախ, անհանգստություն, տագնապ, անորոշություն: Ահա, մարդը քայլում է փողոցով, ինքն իրեն խոսում, իր անհամաձայնությունը միայն ինքն իրեն է «վստահում» եւ քայլում է իր իսկ ստվերից վախեցած: Վախեցողների քանակն օրեցօր ավելանում է: Չնայած ահագնացող դժգոհությանը՝ ամեն օր ավելի շատ մարդ չի խոսում անարդարությունից, անօրինականություններից, երկրի գլխին կախված վտանգներից: Ու այդ պահից հասարակությունը դադարում է լինել խոսող մարմին, դառնում է դիտող, իրադարձություններին հետեւող անմասնակից ստվեր: Եվ ամենացավալին այն է, որ վախը դառնում է տրամաբանություն, հաշվարկ, «իմաստուն» ինքնապահպանություն: Վախի ու լռության պատճառով էլ չեն կրճատվում «նիկոլդավան» քաղաքացիների շարքերը: Սրանք մեկ որ «ընդունել» են նրան, միտք չունեն դավաճանելու, որովհետեւ Նիկոլի ու ՔՊ-ի ազգադավ գործունեության մասին տվյալներ հաղորդող ու մեկնաբանություն տվողները չեն ավելանում, եթե կան՝ քիչ են, ծույլ են, դանդաղաշարժ են: Ծանր աշխատանք է պահանջվում՝ նրանց «դարձի բերելու»: Ընդդիմությունն զբաղված է ամեն ինչով՝ ինտրիգներ, վերադասավորումներ, կոալիցիաներ, բայց մասսաների մեջ բացատրական աշխատանք ծավալելը վատ է անում, դեռ վաղ է համարում: Իզուր: Արթնանալ է հարկավոր:

Այլապես՝ դեռ երկար ժամանակ լռությունն ինքնապաշտպանություն կթվա եւ ուժ կտա այն ամենին... ինչից վախենում ենք:



Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ՀՀ-Ն ԳՏՆՎՈՒՄ Է ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՏՈՒՄ, ՄԵՆՔ՝ ՍՓՌՎԱԾ ՀԱՅԵՐՍ, ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՆՔ ԼԻՆԵԼ ԼՈԿ ԴԻՏՈՐԴ

*Հարցազրույց Համահայկական Սենատի համակարգող **Արամ Մկրտչյանի** հետ*



- Հայաստանում կայացան ԵՔՀ, ապա՝ ԵՄ-Հայաստան առաջին գագաթնաժողովները: Իբրեւ Եվրոպայում ակտիվ գործունեություն ծավալող գործիչ՝ ինչպե՞ս կգնահատեք այս միջոցառումների դերը Հայաստանի վարկանիշի վրա:

- Հայաստանի Հանրապետությունում եւ նրա շուրջ կատարվող զարգացումներն անհրաժեշտ է դիտարկել միմիայն պետության անվտանգության տեսանկյունից: «Ռենդ Քորփորեյշն» (RAND Corporation) 2024, 2025, 2026 թթ. հրապարակումները, մասնավորապես The U.S. Can't Guarantee Armenia's Security, Despite Azerbaijan's Threats, but It Can Help (ԱՄՆ-ն չի կարող երաշխավորել Հայաստանի անվտանգությունը, չնայած Ադրբեջանի սպառնալիքներին, բայց կարող է օգնել), Countering Russian Influence: Support for Armenia, Georgia, and Moldova in the 'Waiting Room of the West' (Հակազդելով ռուսական ազդեցությանը. աջակցություն Հայաստանին, Վրաստանին եւ Մոլդովային՝ «Արեւմուտքի սպասասրահում»), Armenia's Specters of Peace and War (Հայաստանի խաղաղության եւ պատերազմի ուրվականները) հոդվածների հիմնական ուղերձն այն է, որ Հայաստանը պետք է վերափոխվի «խոցելի դիմորդից» դեպի «դիմակայուն գործընկեր», որն ունակ է ինքնուրույն պաշտպանվել այնքան ժամանակ, մինչեւ միջազգային հանրությունը կարողանա դիվանագիտական միջամտություն ցուցաբերել: Այս համատեքստում մայիսի 4-5-ը Երեւանում կայացած Եվրոպական քաղաքական համայնքի եւ ԵՄ-Հայաստան գագաթնաժողովները բարձրացրին Հայաստանի վարկանիշը՝ միջազգային ասպարեզում «դիմորդից» վերածելով «գործընկերոջ»: Անհրաժեշտ է շեշտել, որ սա ռիսկային քաղաքական կապիտալ է, որը կարող է ամրապնդել կամ քայքայել երկրի դիմակայունությունը: Ռիսկային քաղաքական կապիտալի այս դրսեւորումները պարտադիր է դիտարկել անվտանգային 5 հիմնական ուղղությունների տեսանկյունից. 1. ռազմական եւ սահմանային անվտանգությունը պետության առաջնային շերտն է: Այն ներառում է զինված ուժերի արդիականացումը, մարտունակության բարձրացումը, սահմանների ամրապնդումը՝ ինժենեռական նոր լուծումների ներդրմամբ: Սեփական ռազմարդյունաբերության զարգացումը՝ որպես արտաքին մատակարարումներից կախվածությունը նվազեցնելու միակ հուսալի միջոց: 2. Դիվանագիտական եւ քաղաքական անվտանգությունը պետք է ծառայի ՀՀ սուվերեն տարածքի անձեռնմխելիությանը: Գագաթնաժողովը տարածաշրջանում խոշոր խաղացողների՝ Ռուսաստանի, Իրանի եւ Թուրքիայի համար մոդելավորեց նոր քաղաքական իրավիճակ: 3. Տնտեսական եւ էներգետիկ անվտանգությունը տնտեսության անվտանգության հիմքն է: Այն ենթադրում է էներգետիկ դիվերսիֆիկացիա (նոր աղբյուրներ, ճանապարհներ) եւ պարենային անվտանգության ապահովում: 4. Ներքին կայունությունը եւ դիմակայունությունն անհրաժեշտ պայման են՝ արտաքին սպառնալիքներին դիմակայելու համար, եւ ամուր թիկունք՝ պետական ինստիտուտների հզորացմանը: Հայաստանի «ժողովրդավարական կղզյակի» համբավը թեեւ համարվում է «ռիսկային քաղաքական արժույթ», սակայն բավարար ճկունության դեպքում կարող է ապահովել երկարաժամկետ անվտանգային երաշխիք: 5. Ժողովրդագրական անվտանգությունը պետության կենսունակության ապահովման գրավականն է: Այն ներառում է ծնելիության աճ, արտագաղթի կանխում, սահմանամերձ բնակավայրերի վերաբնակեցում: Հայրենադարձության կազմակերպումը եւ կայուն ապագայի տեսլականը պետք է դառնան դեմոգրաֆիական ճեղքումն ապահովող հիմնական գործիքները:

- Ակնհայտ է, որ Փաշինյանն այս 2 իրադարձությունն օգտագործում է նախընտրական իմաստով՝ իր կշիռը, վերարտադրվելու հավանականությունը մեծացնելու համար: Իսկ Եվրոպան նրան սպասարկում է:

- Հայաստանի անվտանգությունը պետք է դիտարկել բացառապես ռազմական, դիվանագիտական, տնտեսական, ներքին եւ դեմոգրաֆիկ սյուների եւ ՌԴ, Թուրքիա, Իրան շահերի ավելացման կամ պակասեցման համատեքստում: Փաշինյանը ստանում է ներքին լեգիտիմություն, իսկ Եվրոպան՝ տարածաշրջանային լծակ: Սակայն այդ լիգիտիմացումը աշխարհաքաղաքական դաշտում «Թրամփի ուղու» միջոցով բերում է «Արեւելյան պանամայացման» իրական վտանգ: Սա նշանակում է պետության վերածում սոսկ «միջանցքի», որի անվտանգությունը դառնում է գերտերությունների առեւտրի առարկա: Անվտանգային վարկանիշը «դիմորդից գործընկեր» փոխելը կարեւոր է, բայց ոչ բավարար՝ պանամայացումից խուսափելու համար: «Թրամփի ուղին» կարող է արժեզրկել «ժողովրդավարական բրենդը»՝ Հայաստանը թողնելով ՌԴ-ԱՄՆ մեծ գործարքի հույսին: ՀՀ-ն առանց հայ ազգի դեմոգրաֆիկ աճի եւ սեփական ռազմարդյունաբերության՝ կրիտիկական խոցելի է: Հայաստանը պետք է հրաժարվի հանդես գալ միայն որպես «սպասարկող տարածք» եւ վերածվի սեփական օրակարգն ունեցող սուբյեկտի: Արեւելքի եւ Արեւմուտքի բախման կետում գոյատեւման պայմանը ազգի դեմոգրաֆիկ աճը եւ տնտեսական դիմակայունության կտրուկ բարձրացումն է: Արտաքին վարկանիշը պետք է ծառայի ներքին ամրությանը, այլ ոչ թե փոխարինի դրան՝ գործարքի զոհ չդառնալու համար:

- Փաստորեն, Փաշինյանին սատարում են Եվրոպան, ԱՄՆ-ն, Բաքուն, Անկարան, բացի սեփական ժողովրդից: Թե՞ ժողովուրդն էլ կընտրի՝ «նախկինների» եւ պատերազմի կեղծ վտանգի քարոզի ներքո:

- Առանց սեփական ժողովրդի ներքին աջակցության՝ ցանկացած արտաքին «սատարում» ընդամենը ժամանակավոր վարկ է, որի դիմաց պետությունը վճարում է սեփական ինքնիշխանությամբ: Երբ պետությունը սկսում է սպասարկել բոլորին՝ բացի իր քաղաքացուց, դադարում է լինել ինքնուրույն գործոն եւ վերածվում է աշխարհաքաղաքական առեւտրի առարկայի: Երբ արտաքին վարկանիշային աճն ու ներքին վախերը փոխարինում են իրական անվտանգային ամրությանը, պետությունը կորցնում է իր սուբյեկտայնությունը: Որպեսզի Հայաստանը չդառնա աշխարհաքաղաքական զոհ, անհրաժեշտ է, որ արտաքին դիվանագիտական կապիտալը ծառայեցվի ոչ թե իշխանության պահպանմանը, այլ ներքին դիմակայունության եւ դեմոգրաֆիկ անվտանգության հզորացմանը: Իրական խաղաղությունը ոչ թե զիջումների կամ միջազգային լուսանկարների, այլ սեփական ժողովրդի գիտակցված համախմբման եւ պետականակենտրոնության արդյունք պետք է լինի: Ժողովրդի ընտրությունը կանգնած է ոչ թե գաղափարների, այլ էքզիստենցիալ վախերի հարթությունում: «Նախկինների» վերադարձի եւ պատերազմի վերահաս վտանգի կեղծ քարոզը կաթվածահար է անում հասարակության քննադատական մտածողությունը: Սա ընտրություն չէ հանուն ապագայի, սա ընտրություն է ընդդեմ սարսափի: Նման պայմաններում իշխանության վերարտադրումը ոչ թե ժողովրդավարության հաղթանակ է, այլ՝ հանրային հուսալքության արձանագրում:

- Իսկ սփյուռքից չե՞ք գալու Հայաստան՝ ընտրություններին մասնակցելու: Կարծեմ՝ բավականին մեծ թվով մարդիկ են գալու, որոնք գիտակցում են՝ օրհասական է հայրենիքի վիճակը:

- Հայաստանի Հանրապետության համար վճռական այս պահին սփյուռքի, մասնավորապես՝ Ռուսաստանի հայության զանգվածային վերադարձը եւ մասնակցությունն ընտրական գործընթացներին դուրս է սոսկ քաղաքական նախապատվության շրջանակից: Պատմականորեն եւ աշխարհաքաղաքականորեն Ռուսաստանը հանդես է եկել որպես Հայաստանի անվտանգային մանդատակիր: Այսօր այդ մանդատի շուրջ ստեղծված ճգնաժամը եւ վեկտորի կտրուկ փոփոխությունը Հայաստանը դնում են «Արեւելյան պանամայացման» վտանգի տակ: «Թրամփի ուղին» կարող է արժեզրկել «ժողովրդավարական բրենդը»՝ պետությունը վերածելով սոսկ «միջանցքի», որտեղ անվտանգությունը դառնում է ՌԴ-ԱՄՆ մեծ գործարքի առարկա: Երբ մանդատակիրը փոխվում է, կամ մանդատը դառնում է առեւտրի առարկա, պետությունը կորցնում է իր սուբյեկտայնությունը: Սա է պատճառը, որ սփյուռքի ներգրավվածությունը դառնում է ազգային ինքնապաշտպանական բնազդի դրսեւորում եւ գոյաբանական պայքար: Թեեւ գործող օրենսդրությունը ստեղծում է կամքի եւ իրավունքի խզում՝ սահմանափակելով սփյուռքի ձայնը, ՀՀ քաղաքացիություն ունեցող հայրենակիցների ֆիզիկական ներկայությունը վերածվում է հզոր քաղաքական ակտիվիզմի եւ ուղղված է պետությունը լոկ սպասարկող տարածքի վերածելու դեմ: Սփյուռքի ներկայությունը փաստում է աշխարհին, որ Հայաստանը ոչ թե սահմանափակ ռեսուրսներով տարածք է, այլ՝ համաշխարհային հզոր ցանց: Սփյուռքի ներկայությունը երկրում կարող է դառնալ այն ուժը, որը կկոտրի պատերազմի վերահաս վտանգի կեղծ քարոզով ձեւավորված «վախի շղթան», հնարավորություն կտա հանրային դիսկուրս բերել ավելի լայն, ազգակենտրոն եւ անզիջում օրակարգ: Հայաստանի Հանրապետությունը գտնվում է ռիսկային գոտում, եւ մենք՝ սփռված հայերս, հրաժարվում ենք լինել լոկ դիտորդ: Մենք վերցնում ենք մեզ վրա իրավական պատասխանատվություն՝ ներկայանալով որպես Սենատ՝ երկրորդ պալատ, որի նպատակը ՀՀ-ին ուղղված վտանգների չեզոքացումն է: Սա այլեւս զուտ ընտրություն չէ, այլ՝ հայրենիքի պաշտպանության գիտակցված եւ կազմակերպված գործողություն:

Արա ԱԼՈՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԸ ԽԱԽՏԵԼ Է ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԸ

Ըստ հանրակրթական դպրոցների տնօրենների նշանակման նոր կարգի՝ տնօրեն նշանակելուց հետո տվյալ մարզպետը կամ ԿԳՄՍ նախարարը պետք է նշանակի նաեւ դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող: Այսինքն, ըստ էության, դպրոցը 2 տնօրեն է ունենում. մեկը տնտեսական հարցերն ու բյուջեն է տնօրինում, մյուսը՝ կրթական ծրագրերն ու բովանդակությունը: Ապրիլի 17-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ արել. «Տավուշի մարզի ո՞ր դպրոցների տնօրենների՝ նոր կարգով նշանակվել, այդ դպրոցներում նշանակվե՞լ է վարչատնտեսական մասի համակարգող»: Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «Տավուշի մարզի դպրոցներում նոր կարգով նշանակված տնօրենների թիվը 21-ն է (Դեբեդավան, Այգեձոր, Լճկաձոր, Դիլիջանի թիվ 6, Գոշի հիմնական, Ազատամուտ, Գոշի միջնակարգ, Հովք, Բերքաբեր, Ջուջեւան, Տավուշ, Դիլիջանի թիվ 2, Դիլիջանի թիվ 4, Իջեւանի թիվ 1, Իջեւանի թիվ 5, Կայանավան, Հաղթանակ, Այգեհովիտ, Բաղանիս, Սեւքար, Զորական), իսկ վարչատնտեսական մասի համակարգող ոչ բոլոր դպրոցներում են նշանակված»: Մարզպետը չի ասել, որ շատ դպրոցներում վարչատնտեսական մասի համակարգողներ նշանակել է, բայց այդ դպրոցներում նոր կարգով տնօրեններ չեն նշանակվել: Օրինակները բազում են: 2025թ. հունիսի 27-ին մարզպետ Ղալումյանը Վոլոդյա Բաբինյանին ազատել է Կիրանցի դպրոցի տնօրենի պաշտոնից: 3 օր անց՝ հունիսի 30-ին, Կիրանց այցելած Նիկոլ Փաշինյանին երկու ձեռքով բարեւած Բաբինյանին նշանակել է Կիրանցի դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող: Դպրոցն ունի ընդամենը 37 աշակերտ, որքանո՞վ էր հրատապ 37 աշակերտ ունեցող դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող նշանակելը: Մարզպետը 2026թ. մարտի 27-ին Հրայր Պողոսյանին նշանակել է Իջեւանի թիվ 3 հիմնական դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող: Պողոսյանը նախկինում տնօրեն է եղել այդ դպրոցում: Թիվ 3-ում նոր կարգով տնօրեն չի նշանակվել, սակայն մարզպետը վարչատնտեսական մասի համակարգող է նշանակել դպրոցի նախկին տնօրենին:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՄՆ

ՄԻԱՑՅԱԼ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ, ՁԵՌՔԻՑԴ ԲԱՑ ՄԻ ԹՈՂ ՔՈ ԱՍՏԵՂԱՅԻՆ ՊԱՀԸ

«Հրապարակի» զրուցակիցն է գրող, հրապարակախոս **Պատրիկ Արտեմին**՝ Պատվական Շաքարյանը, որը Խորհրդային Հայաստանում երկար տարիներ եղել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի բաժնի վարիչ: Այժմ նա ԱՄՆ-ում է: Մի փոքր ուշացումով պատասխանեց մեր հարցերին, բացատրելով.

«Սիրելի Գագիկ, ներող եղիր, պատվերդ մի փոքր ուշացավ, քանի որ Եվրոպան «եկել էր» Երեւան: Մի քիչ դանդաղեցի, որ տեսնեմ՝ հին աշխարհի ամՊն է պակաս, թե մաղը: Թատրոն էր, պիես էր մեկ արարով՝ նախատեսված հին աշխարհի բոլոր երկրների առաջին դեմքերի համար, որոնք խաղում էին ստահակների դերը: Պատկերացնո՞ւմ ես, այդ պատվազուրկ մարդիկ եկել էին սիրաշահելու երկրի վրա երբեւէ ծնված ամենանողկալի դավաճանին՝ հայ-ռուսական հարաբերությունները վերջնական սառեցնելու եւ հայ ժողովրդին Թուրքիայի եւ Ադրբեջանի ողորմածությանը թողնելու համար: Հարգանքս Էրդողանին եւ Ալիեւին, որոնք հրաժարվել էին այդ ֆարսում իրենց վերապահված դերից: Մեր ժողովրդին սեղմ հիշեցնեմ, որ Եվրոպան իր մեծ խաղերի մեջ անխղճորեն զոհաբերել է փոքր ժողովուրդներին: 17-19-րդ դարերում Ռուսաստանը Թուրքիայից 3 անգամ ազատագրել է մեր պատմական հայրենիքի պատկառելի մասը եւ առաջարկել վերականգնել հայկական պետությունը: 3 անգամն էլ Անգլիան պահանջել է բավարարվել բարենորոգչությամբ՝ թողնելով Թուրքիայի կազմում: Իսկ Գերմանիան, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ լինելով Թուրքիայի դաշնակիցը, իր ռազմական ընկերոջը հասկացրեց, որ հայերով խիտ բնակեցված Անկարա-Բաղդադ երկաթուղու ավազանը պետք է մաքրել հայ տարրից: Թուրքերը զարհուրելի մոլուցքով հայերին կոտորում էին, լցնում ծովերն ու գետերը, քշում ավազուտները: Այդքանով չվերջացավ Եվրոպայի հայատյացությունը: Երեւան ժամանած այս «թատրոնն» ինձ հիշեցրեց Անգլիայի մի ուրիշ քայլ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո: Ռուզվելտի խորհրդական Հոպկինսի մեմուարներից իմանում ենք, որ Մոլոտովը, ապա անձամբ Ստալինը դիմել են Անգլիայի վարչապետ Էնտոնի Իդենին՝ խնդրելով համաձայնություն տալ երեք վիլայեթների վերադարձին, ներառյալ Տրապիզոնը, պատերազմից տուժած հայ ժողովրդին: Իդենը մերժել է: Հիմա Նիկոլը, ատելով հայ ժողովրդին՝ էյֆորիայի մեջ, սիրախոնարհ գլուխն անկանոն ճոճելով վազում է՝ ողջագուրվելու եվրոպական աճպարարների հետ՝ կարծելով, թե իր շալակի դավաճանության բեռը կարող է հոնի կորիզի չափով թեթեւացնել»:

- Ձեր գնահատմամբ՝ այսօր ինչպիսի՞ իրավիճակում է Հայաստանը:

- Առանց դույզն-ինչ վարանելու ասեմ, որ մենք գործ ունենք ծանրագույն իրավիճակի հետ: Իմ համոզմամբ, գործող իշխանության քաղաքականությունն ունեցել է կործանարար հետեւանքներ: Երկիրը թուլացել է, անվտանգային համակարգը խարխլված է: Ես կարծում եմ՝ Փաշինյանի կառավարման ընթացքում երկիրը հայտնվել է մի վիճակում, որը կարելի էր կանխել: Երբ ղեկավարությունը հայտարարում է, որ երկիրն անպաշտպան է եւ ստիպված է կատարել հակառակորդի պահանջները, դա արդեն խոսում է համակարգային ձախողման մասին:

- Դուք խոսում եք նաեւ արտաքին գործոնների եւ Ադրբեջանի մասին:

- Այստեղ կարեւոր է հասկանալ, որ գործընթացները մեկուսացված չեն: Իլհամ Ալիեւի քաղաքականությունը եւ Հայաստանի ներսում տեղի ունեցող զարգացումները փոխկապակցված են: Եթե մի կողմում ընթանում է ակտիվ զինում, իսկ մյուսում թուլանում է պաշտպանունակությունը, հետեւանքները կանխատեսելի են: Անհրաժեշտ է ձեւավորել պատասխանատու իշխանություն, վերականգնել բանակը եւ արտաքին քաղաքական հավասարակշռությունը: Առանց այդ քայլերի, դժվար է խոսել պետության կայունության մասին: Բացի այդ, հասարակությունը պետք է հստակ դիրքորոշում ունենա եւ հասկանա իր դերակատարումը:

- Ձեր ուղերձը հասարակությանը:

- Առանց դույզն-ինչ վարանելու, մենք կարող ենք ասել, որ բոլոր ժամանակների մեծագույն դավաճանը հայ է, անունը՝ Նիկոլ: Այդ տղան սովորական մեկը չէ, այլ՝ հանճարեղ ձեռնածու, որը մատների վրա խաղացնելով մի ամբողջ ժողովրդի, ոչ երկար ժամանակում կարողացավ արյունաքամ անել երկիրը եւ փալասի պես փռեց թշնամու ոտքերի առաջ: Եվ հիմա անմեղության դիմակ դնելով չարագործի իր դեմքին՝ ականջ սողոցող ֆալցետով ճչում է. երկիրը բացարձակ անպաշտպան է, թշնամին ինչ ասի՝ պիտի անենք: Նախկինները քեզ տվել էին պաշտպանունակ երկիր, ի՞նչ արեցիր այդ երկրի հետ: Գնում, մեր դաշնակցի հետ խոսում էիր սուվերենությունից, դիվահարի պես քանդում էիր նախկինների թողած պաշտպանական համակարգերը, հալածում տաղանդավոր զինվորականներին: Քեզ ճղատելով բարձրացել էիր հրապարակ, մուրում էիր ժողովրդի աջակցությունը, ինչի՞ համար, երկիրը կործանելո՞ւ... Ի՞նչ պատասխան ես տալու վերին երկնավորին, նրա զավակներին: Նիկոլը գիտի, թե ինչ է ուզում հայ ժողովուրդը, բայց դա հակասում է նենգ պլաններին: Այո, համոզված եմ՝ Նիկոլն ատում է հայությանը: Իր հերթին, ժողովուրդը հստակ չի պատկերացնում, թե ինչ է ուզում Նիկոլը, եւ գտնվում է երկվության մեջ: Բայց, ահա, Նիկոլն ու «յոլդաշ» Ալիեւը լավ գիտեն, թե ինչ են ուզում: Նա մտածված ձեւով Հայաստանի զինված ուժերը թողնում է առանց սպառազինության եւ այդ նպատակին հատկացված գումարները պարգեւ-հավելավճարների տեսքով բաժանում խորհրդարանի պատգամավորի անվան տակ ծվարած թափթփուկներին, իրեն նվիրված վերնախավին եւ ուժային կառույցներին: Իլհամն էլ տենդագին զինվում է, որ հենց պահը գա, եւ Նիկոլը նշան անի, զորքը մտցնի Հայաստան: Այդժամ Նիկոլը պայման է դնելու հայ ժողովրդի առաջ. «Եթե չեք ուզում, որ ստորագրեմ կապիտուլյացիայի պայմանագիր, դավաճանի փոխարեն ինձ կոչեք սուրբ Նիկոլ, արձանս դրեք Ազատության հրապարակում, եւ Իլհամը չի գա առաջ»: Ալիեւը սիրով կհամաձայնի Հայաստանն ու Արցախը սկուտեղի վրա իրեն մատուցած Նիկոլի պատվին մի կարճ ժամանակով դադար տալ:

Հայ ժողովուրդ, սա ոչ թե երեւակայության խաղ է, այլ վաղվա օրվա դառն իրականություն: Հայ ժողովուրդ, ուշացումի եւ կորստյան այս դաժան պահին ելիր ոտքի, ստեղծիր արդար, ժողովրդավարական իշխանություն եւ դաշնակցելով հարեւան երկրների՝ Ռուսաստանի եւ Իրանի հետ, փրկիր մեր սուրբ Հայրենիքը: Պատերազմ չէր լինի, եթե Նիկոլն Ալիեւին խոստացած չլիներ, որ կապահովի Հայաստանի պարտությունը: Ամեն ինչ վկայում է այդ մասին: Նիկոլն սկսեց ամենազգայուն տեղից, նա ձեռնարկեց բանակի գլխատումն ու փորձառու զորահրամանատարների նկատմամբ հալածանքը: Նա ՀԱՊԿ-ի զորքերի ղեկավար Խաչատուրովին պաշտոնանկ անելու համար հրավիրեց Երեւան եւ կեղծ մեղադրանքով կալանավորեց: Դա կարեւոր քայլ էր, քանի որ հայազգի գեներալը վճռական պահին կարող էր օգնության հասնել պարտվող Հայաստանին: Ալիեւին զսպաշապիկի մեջ պահողը Պուտինն էր, հարկավոր էր նրան էլ հանել մեր դեմ, եւ դա էլ արեց: Հետագա բոլոր քայլերով Նիկոլը Հայաստանին մեկուսացրեց իր դաշնակից բարեկամներից եւ նախապատրաստեց մեր պարտությունը: Եթե գերագույն գլխավոր հրամանատարը դավաճան է, այդտեղ այլ ելք չէր կարող լինել:

Հայ ժողովուրդ, հիմա ինչպե՞ս կարող ես թույլ տալ, որ պետական դավաճանը նորից գնա ընտրությունների, վերարտադրվի եւ ավարտին հասցնի մեր երկրի կործանումը: Ի՞նչ է պետք անել. հարկավոր է արգելափակել նրա ընտրվելու իրավունքը, ուղարկել բանտախուց եւ կազմակերպել արդարացի ընտրություններ:

Միացյալ ընդդիմություն, ժողովուրդը պատրաստ է, ոտքի հանիր ժողովրդին: Այսքան հարմար պահ երբեք չի եղել: Միացյալ ընդդիմություն, ձեռքիցդ բաց մի թող աստեղային պահը: Հենց հիմա է որոշվում՝ հայությունը կապրի՞ որպես հայրենիք ունեցող ժողովուրդ, թե՞ շրջմոլիկի նման գոյությունը քարշ կտա օտարի դռներին:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

«ՍԹԵՆԼԻ ԷԹՎԵԼԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ». ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՆՈՐ ԴՐԱՄԱՅԻ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆԵՐԸ

Մեկնարկել են «Սթենլի Էթվելի վերադարձը» նոր թրիլլերի նկարահանումները, ըստ Սթիվեն Սոդեբերգի գործի: Այն կարելի է դասել գոթիկական դրամայի ժանրին, որն ունի հոգեբանական թրիլլերի էլեմենտներ: Ներկայացնում է հարուստ ընտանիքի ժառանգի պատմությունը, որը տեւական բացակայությունից հետո վերադառնում է տոհմական կալվածք եւ բախվում անցյալի գաղտնիքներին, ընտանեկան կոնֆլիկտներին եւ ներքին անձնական ճգնաժամերի: Սյուժեն կառուցված է գլխավոր հերոսի՝ Սթենլի Էթվելի եւ տոհմական կալվածքի շուրջ, որը կոնկրետ հերոսի համար հանդիսանում է վերադարձի հիմնական մոտիվ: Այս «վերադարձի» մոտիվը, ըստ էության, եվրոպական գրականության համար դասական է եւ խորհրդանշում է ոչ միայն ֆիզիկական վերադարձ, այլ նաեւ՝ անցյալի: Արծարծված հիմնական թեմաներն են՝ հիշողություն եւ ժառանգություն, ինքնություն եւ ես-ի որոնումներ, վերնախավի բարոյական անկում եւ բարոյալքում, ընտանեկան եւ անցյալի գաղտնիքներ ու ամոթի զգացողություն: Գլխավոր հերոսը տիպիկ երկատված անձ է, որը գտնվում է ժամանակակից աշխարհի ռացիոնալականության եւ անցյալի իռացիոնալականության սահմանագծին: Նրա վերադարձը նաեւ դառնում է հերոսի հոգեբանական վերափոխման ցուցիչը: Ուշագրավ է այն, որ առանձին պերսոնաժ է ներկայացված ընտանեկան կամ տոհմիկ կալվածքը: Կրում է Սոդերբերգի յուրահատուկ ձեռագիրը եւ մեկնաբանվում է նաեւ այդ ձեռագրի համատեքստում, երբ պատումը ոչ գծային է, ունի ֆրագմենտալ կառուցվածք, մեծ ուշադրություն է դարձված վիզուալ դետալներին, այսինքն՝ հեղինակն ունի կինեմատոգրաֆիական մտածողություն եւ շարադրում է դրա համեմատ: Ֆիլմի ռեժիսորը Բրայան Վելշն է: Նկարահանումներին մասնակցում են Նիկոլաս Գալիցինը, Դեմիեն Լյուիսը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Շուրջբոլորը հողը տնքում է ռումբերի պայթյուններից, միլիոնավոր մարդիկ տարհանվում ու կոտորվում են:

ՄԱՐԴԻԿ ԱՎԵԼԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՆ, ՔԱՆ ԻՐԵՆՔ ԵՆ ՄՏԱԾՈՒՄ, ԵՎ ՇԱՏ ԱՎԵԼԻ ԱՆԲԱՐՈ, ՔԱՆ ԿԱՐՈՂ ԵՆ ԵՐԵՎԱԿԱՅԵԼ

Ստեր երկրի վրա անթիվ հարցականներ են կախված, իսկ քաղաքական «էլիտան», ինչպես միշտ, իր նեղ շահերից վեր կանգնելու հասունություն չունի: Հունիսի 7-ին ընդառաջ ՔՊ-ն կասկածելի խաղաղության ճերմակ դրոշը կծածանի հանրապետության վրա, կթմբկահարի Թրամփ «խաղաղաբերի» անունը, Ալիեւի հետ չեղած համաձայնությամբ մեր տարածքային ամբողջականության ճանաչումը (ոչինչ, որ նա մեզ հրապարակայնորեն մեղադրում է ցեղասպանության մեջ):

- Ուտոպիա՛,- հեռուներից կքմծիծաղի մեծն Չերչիլը,- երբ քո գլուխը վագրի երախում է, ինչ խաղաղության մասին է խոսքը:

«Ուրախ ավտոբուսի» ՔՊ-ական երջանիկ ուղեւորները, պեռաշկի ըմբոշխնելով, վաղաժամ քարոզարշավի են գնում:

- Ինչ կա միջազգային կյանքում,- ծամելով հարցնում է շեֆը:

- Խառն է,- ասում է ԱԺ փոխնախագահը:

- Շատ լավ,- կուլ է տալիս պատասխանը,- շատ լավ:

- Օրենքով արգելվո՞ւմ է,- հարցնում է իշխանամետ զրուցավարը:

- Ոչ,- խոստովանում է պարոնը,- բայց...

Լսում ես սրա նմաններին (Հ. Մկրտչյան, Ռ. Մեհրաբյան, Լ. Շիրինյան, Հ. Խուրշուդյան, Ա. Արշակյան, Հ. Սուքիասյան...) ու ակամա հիշում մեծն լոռեցուն՝ էսքա՞ն էլ չար լինի մարդ... Բա որ կեղծ փաստաթղթերով բանակից թռած էն Արման Բաբաջանյանը բարոյականությունից է խոսում: Լավ, էլի... Ու ամեն մեկը, երկրի համար այս ճակատագրական պահին, խաշլամայի հոտից արբած, իր փայ բաժինն է փորձում թռցնել քլթքլթացող կաթսայից:

Սրանց դեռ կարելի է հասկանալ, անմեկնելի է «անկախ» պատգամավոր Գեղամ Նազարյանի, որն ասպարեզ եկավ որպես 44-օրյայում զոհված Աբգարի հայր (նրա սրտառուչ ելույթները դեռ ականջներումս են), կերպափոխությունը: Եթերում, անառարկելի տոնով, ասում է. «Եթե չլինեին մեր ազգի պոռոտախոսությունն ու մեծամտությունը, մեր զոհված տղերքն այսօր կքայլեին մեզ հետ փողոցում», արգելեն ընտրություններին մասնակցել եւ այլն, եւ այլն, բա չունենա՞ք այլընտրանքային տարբերակներ:

Իմացեք, այս անգամ Ձեր պարզապես արգելված է պարտվել, հակառակ դեպքում՝ խաչ քաշեք Ձեզ ու Ձեզ դեռեւս հավատացող մարդկանց ու երկրի վրա: Հրավիրեք քաղտեխնոլոգների, լսեք նրանց (մի կասկածեք, մեր երկրում Ձեզնից ու Ձեր շրջապատից ավելի խելացի մարդիկ էլ կան): Դուրս եկեք խեղդուկ դահլիճներից, անձամբ Դուք եւ Ձեր թիմը շփվեք մարդկանց հետ (ուշացել եք, բայց դեռ ուշ չէ), շրջեք քաղաք առ քաղաք, գյուղ առ գյուղ, թաղ առ թաղ: Եթե դուրս եք եկել պայքարի, բարի եղեք՝ քաշ գցել...

Առայժմ լավ տպավորություն է թողնում «Ուժեղ Հայաստան» շարժումը: Երիտասարդ են, էներգիան «ուտում» է նրանց: Պակաս կարեւոր չէ, որ անբիծ կենսագրություն ունեն ու «նախկին» չեն:

Հետաքրքիր մարտավարություն է ընտրել «Բարգավաճը»՝ «առաջարկ Հայաստանին» կարգախոսով: Սահուն ներքաշվել է քաղաքական պայքարի մեջ՝ իր շուրջը համախմբելով ոլորտային առաջատար մասնագետների: Գագիկ Ծառուկյանի առավելություններից մեկը մարզաշխարհում եւ գյուղացիների շրջանում ունեցած հեղինակությունն է: Բայց նա էլ պետք է անխուսափելի «եթե»-ներին պատրաստ լինի: Բարեկամաբար հուշեմ, որ շատ բանով կշահի իր քարոզչությունը, եթե «Կենտրոն» ՀԸ-ի հաղորդաշարերի հեղինակներ Ա. Աբովյանը եւ տեղի-անտեղի դիմացինին ընդհատող Մ. Մելքումյանը փոխարինվեն պրոֆեսիոնալներով: Ժուռնալիստիկան թթու թան չէ, ինչը չի կարելի ասել «Առանց կարծրատիպերի» ու «Ես կամ» հաղորդաշարերի հեղինակների մասին:

Ավելորդ է խոսել ՀԱԿ, «Լուսավոր Հայաստան», «Հանրապետություն» կուսակցությունների եւ «քամի անող» ուրիշ գաճաճ խմբերի մասին, որոնք իրենց մանր-մունր հաշիվներն ունեն:

Մեր քթի տակ՝ Իրանի դեմ պատերազմի առաջին օրն էր...

Իշխանության «պահապան հրեշտակներն» իրենց բռի, թունոտ խոսույթով, թերեւս, ավելի շատ վնասում, քան օգնում են «պատրոնին»: Օրինակ, եղբոր՝ Վազգենի անունը տեղի-անտեղի շահարկող Արամ Սարգսյանը պնդում է, որ Սամվել Կարապետյանի թիմին պետք է զրկել ընտրություններին մասնակցելու իրավունքից (այս կպչուն միտքը հանգիստ չի տալիս նաեւ մյուս «հրեշտակներին»), պատճառաբանելով, թե մարզեր այցելության համար մեծ թվով ավտոբուսներ են օգտագործել...

«Ադրբեջանը լեգիտիմ իրավունք ուներ մեզ վրա հարձակվելու», գլխավորը՝ «Փորձում են համոզել մարդկանց, որ Նիկոլն է պատերազմ բերել», եւ ամենագլխավորը՝ «եթե անկախություն եք ուզում, ընտրեք Նիկոլին եւ ոչ թե հյուսիսից հյուրախաղերի եկած ինչ-որ մեկին...»: Համաձայնեք. միշտ չէ, որ լուրջ դեմքով կարելի է խելացի մտքեր դուրս տալ ու ազնիվ լինել...

Կկեղծեմ, եթե ասեմ, որ հիացած եմ ընդդիմության գործելաոճից: Նկատե՞լ եք, որ սրանք էլ, ինչպես իշխանության «կարկառունները», անհավանականորեն գիրացել են, զուգվում-զարդարվում են (հատկապես՝ կանայք)՝ «գնա, գալիս եմ»: Այն տպավորությունն է, որ խորհրդարանական ընդդիմությունն իր «սուր» հարցերով փորձում է արդարացնել 2021-ին մանդատից չհրաժարվելը: Իսկ ո՞ւր մնաց «հողատուին» պաշտոնանկ անելու, ՔՊ-ի կյանքը դժոխքի վերածելու խոստացված օրակարգը: Անեկդոտ հիշեցի. մարդ ու կին գնում են դաշտով, հանկարծ հայտնվում է մի ձիավոր, կնոջը նստեցնում է թամբին, շրջանի մեջ առնում տղամարդուն ու հրահանգում՝ ոտքդ դուրս չդնես շրջանից, մինչեւ վերադառնանք: Որոշ ժամանակ անց ձիավորը հանձնում է կնոջը, քշում-գնում:

- Այ կնիկ,- ճանապարհին խորհրդավոր ժպտում է ամուսինը,- բա չիմացար, էդ տականքին լավ հիմարացրի՝ երկու անգամ ոտքս հանել եմ շրջանից...

Այո, ընդդիմությունը մի երկու անգամ ոտքը հանել է շրջանից... Պարզ ասած՝ ի՞նչ է արել անցած հինգ տարիների ընթացքում: Իսկ ընտրություններին հաշված օրեր են մնացել: «Հայաստան» դաշինքը, կարծես, դասեր չի քաղել եւ կրկնում է 2021-ի սխալները (տաք դահլիճներում՝ հազար անգամ լսված խոսքեր, բազմասերիանոց անհաջող փոդքաստներ...): Սրա վերջը, թերեւս, այն կլինի, որ Իշխան Սաղաթելյանը, ինչպես նախորդ անգամ, իր հաճելի բարիտոնով հայտարարի, որ պայքարը շարունակվելու է՝ մարզերում «բջիջներ» ստեղծելուց հետո...

Դաշինքի առաջնորդ Ռոբերտ Քոչարյանին լրագրողը հարցնում է՝ իսկ եթե...

- Եթե-մեթե չկա, հաղթելու ենք, ու վերջ:

Բայց, պարոն նախագահ, ախր, Դուք նույն բանը նույն համոզվածությամբ ասել եք նաեւ 2021-ին: Չհամոզվեցի՞ք, որ առանց «եթե»-ների պատասխանն ունենալու դատապարտված եք անհաջողության: Ասենք՝ եթե Ձեզ կալանավորեն (ինչը չի բացառվում), ասենք՝ դաշինքին երկու ամիս ժամկետով: Հանրային մեղադրողը կալանքը երեք ամսով երկարաձգելու միջնորդություն էր ներկայացրել, պաշտպանական կողմը միջնորդել էր խափանման միջոց սահմանել տնային կալանքը՝ 20 միլիոն դրամ գրավի համակցությամբ: Դատարանը մեղադրողի պահանջը կատարեց՝ մեկ ամիս պակասեցնելով:

Գյումրու ընդդիմադիր քաղաքապետն արդեն 7-րդ ամիսն է՝ անազատության մեջ է: 65-ամյա Ղուկասյանը մեղադրվում է կաշառք ստանալու, խուլիգանության եւ պաշտոնեական լիազորությունների չարաշահման ու փողերի լվացման հոդվածներով: Ղուկասյանը մեղադրանքները չի ընդունում, նա եւ իր փաստաբանները պնդում են, որ սա քաղաքական հետապնդում է՝ Գյումրու համայնքապետի պաշտոնը զավթելու նպատակով:

Սիմոն ՀԱԿՈԲՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 7.05.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԴԵՄ ԳՐՈՂԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

«Հրապարակ»-ի տեղեկություններով՝ Գլխավոր դատախազությունը հերթական քաղաքացիական հայցն է ներկայացրել Գյումրու կալանավորված քաղաքապետ Վարդան Ղուկասյանի դեմ: Դատախազությունը պահանջում է անվավեր ճանաչել Վ. Ղուկասյանի 2006 թվականի աճուրդների որոշումները: 2006-ին եւս Ղուկասյանը Գյումրու քաղաքապետն է եղել:

Թե ինչ աճուրդների մասին է խոսքը, փորձեցինք ճշտել նրա փաստաբան **Արամայիս Հայրապետյանից**: Նա ասաց, որ տեղյակ չէ այդ հայցից, չգիտի, թե ինչ մասին է խոսքը:

Ղուկասյանի մեկ այլ պաշտպան՝ **Առնոլդ Վարդանյանը**, որը Ղուկասյանի շահերն է պաշտպանում՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործով, որը քննվում է այժմ Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարանում՝ դատավոր Նարինե Ավագյանի վարույթում, նույնպես ասաց, որ տեղյակ չէ նոր քաղհայցից: Խոսելով քննվող քաղաքացիական գործի մասին՝ նշեց, որ դատախազությունը լրացրել է հայցապահանջը. «Ճավալ կա լրացված, ձեռքիս տակ չէ կոնկրետ, չեմ կարող ասել, թե ինչեր են լրացվել: Նոր պատասխանողներ են ներգրավվել, հայցի առարկայի եւ հայցապահանջի փոփոխության միջնորդություն են ներկայացրել»: Հետաքրքրվեցինք՝ ընտանիքի անդամների՞ն են ներգրավել: «Նաեւ եւ ոչ միայն, այլ մարդիկ կան, որոնք իր հետ կապ չունեն, բայց միջնորդություններ ներկայացված են: Դատախազության ներկայացուցիչը մի անգամ նախկինում լրացրել էր բովանդակային իմաստով, այս անգամ պահանջի մասով լրացումներ են եղել, մենք առարկություններ ներկայացրել ենք, բայց դեռ ժամկետ ունենք՝ պատասխան ներկայացնելու, հունիսին է լինելու հաջորդ նիստը, որի ընթացքում կներկայացվի ավելի մանրամասն»: Ի սկզբանե դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը քաղհայցը ներկայացրել էր Վարդան Ղուկասյանի, նրա ընտանիքի անդամներ Սպարտակ, Նոնա եւ Մանյա Ղուկասյանների դեմ:

Հիշեցնենք, որ Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանի կալանքի ժամկետը մարտին երկարաձգվեց եւս

Անանա ՊԱՊԻԿՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am